2016

ԾՐԱԳՐԻ ՈԻՂԵԳԻՐՔ Հայնպել Հայերքնի Ուղղագրիչ 3.0

PROGRAM GUIDE: HySpell Armenian Spellchecker 3.0



Յարօ Միերեան © 2016 Hyspell.com 7/15/2016



Յայերենի Ծրագրի Ուղեգիրք – Ուղղագրիչ 3.0 ՅԱՐՕ ՄՅԵՐԵԱՆ, Մաթեմատիկայի գիտ. դոկր., բնագետ, համակարգչի ծրագրաւորման ճարտարագետ Յույիս 2016, Ուղղագրիչ 3.0 ծրագրաշարի թողարկման առթիւ։

ՅԻՄՆԱԲԱՌԵՐ – մայրենի, մայրենու պահպանում, հայերէն լեզու, հայերէն լեզուի ուղղագրիչ, հայերէն լեզու ծրագիր, ծրագիր, ծրագրաշար, հայերէն, լեզու, ուղղագրութիւն, դասական ուղղագրութիւն, նոր ուղղագրութիւն, արդի հայերէնի ուղղագրութիւն, ուղղագրութիւնների փոխարկիչ, ուղղագրութեան հարց, հայերէնի ստեղնաշար, ստեղնաշար, ընդլայնուած ստեղնաշար, գրամեքենայ ստեղնաշար, բառարան, հայերէն լեզուի բառարան, ARMSCII, ARMSCII-8, ունիկոդ, ունիգոտ, յունիկոդ, նայիրի բառարան, ֆայրֆոքս, օպընօֆիս, ուորդ, ադոբի ինդիսայն։

KEYWORDS: Armenian, Armenian language preservation, Armenian language, Armenian language spellchecker, Armenian language program, program, software program, language, orthography, classical orthography, reformed orthography, modern Armenian orthography, orthography converter, orthography question, Armenian keyboard, keyboard, extended keyboard, typewriter keyboard, dictionary, Armenian language dictionary, ARMSCII, ARMSCII-8, Unicode, UNICODE, Nayiri dictionary, Forefox, OpenOffice, Microsoft Office, Microsoft Word, Adobe InDesign.

ՅԱՐՕ ՄՅԵՐԵԱՆ © 2016

Բովանդակութիւն

Ծանօթութիւն1
Ծրագրաշարի տեղադրում2
Տեղադրիչի մանրամասներ
Ստեղնաշարերի նախադիտում և մանրամասներ8
Ստեղնաշարերի տեղադրում եւ ձեւակազմում12
Ինչպէ՞ս վերատեղակայել ծրագրաշարը14
Տեղակայուած տառատեսակները14
Ուղղագրել վահանակի միջոցաւ18
Բառագանձի օգտագործման և խնդրափեղկի մասին21
Փոխարկում դասական եւ նոր ուղղագրութիւնների միջեւ22
Դասականից դեպի Նոր Ուղղագրութեան22
Նոր Ուղղագրութիւնից դեպի Դասական24
Ինչպէ՞ս փոխարկել ARMSCII-8 TEXT նիշքը UNICODE-ի25
Ուղղագրիչի Firefox-ի տարբերակ25
Ուղղագրիչի OpenOffice-ի տարբերակ28
Մի քանի խօսք ուղղագրութեան հարցերի մասին31
Ցուցակ 35

Ծանօթութիւն

Սոյն ուղեգիրքը պարունակում է անհրաժեշտ մանրամասնութիւններ՝ ՅայՍպելի Յայերէնի Ուղղագրիչ ծրագրաշարի 3.0 տարբերակի տեղակայման եւ օգտագործման վերաբերեալ։

2010 թուականից արդեն թողարկուած հայերենի ուղղագրութեան առնչուող՝ ՅայՍպել Ուղղագրիչ ծրագրաշարը, անկասկած ազդեցիկ դեր ունեցաւ հասարակութեան մեջ, յատկապես դասական ուղղագրութեան պահպանման եւ հայերեն լեզուի գրական կիրառման խնդիրների շուրջ։ Շատ բան է փոխուել այս վեց տարուայ ընթացքին, և արդեն՝ կարելի է յստակ ընդունել որ՝ արձանագրուել է մի փոբր յառաջընթաց Մայրենու զարգացման ուղղութեամբ։

Չշեղուելով նիւթից, յայտնեմ միայն այն, որ՝ մեր յանձնարարականը, ի թիւս այլոց՝ ընդգրկում է անշուշտ՝ հայերէն լեզուի համակարգչային ոլորտի մշակման, յառաջդիմութեան եւ զարգացման ձեռնարկներ։ Յայերէն լեզուի ուղղագրութեան եւ բառարանների առնչութեամբ, սա նշանակում է անշուշտ՝ ՅայՍպել Ուղղագրիչի ժամանակակից տարբերակ, և այսօրուայ դրութեամբ, ուրեմն՝ «Ուղղագրիչ 3.0»։

Ի տարբերութիւն նախորդ 2.4 տարբերակին, «Ուղղագրիչ 3.0»-ն լրացնում է մի քանի կարևոր թերութիւններ, ներառեալ 64-bit տարբերակը և Microsoft Office 2013/2016 միջերեսային փոխաբերութիւնը։ Ստորեւ ներկայացնում ենք ծրագրաշարում տեղ գտած գլխաւոր յատկութիւնների ամփոփումը։

- Պարունակում է հայերէն լեզուի ուղղագրութիւնը ստուգող եւ ճշգրտող փոխգործուն ծրագիր, միաւորուած Microsoft Office 2007/2010/2013/2016 Word, Firefox, OpenOffice, Adobe InDesign և այլ ծրագրերի հետ։
- Ուղղագրիչի 3.0 տարբերակը, ընձեռնում է կարելիութիւնը՝ ստուգելու թէ՛ դասական եւ թէ՛ նոր ուղղագրութեամբ (իբրև օգտագործողի նախընտրանբ)։
- Պարունակում է փոխարկիչ դասական եւ նոր ուղղագրութիւնների միջեւ։
- Պարունակում է փոխարկիչ ARMSCII-8 այլագրուած TEXT նիշքից դեպի UNICODE:
- Ընդգրկում է հայերէնի 18,000 բառնոց դպրոցական բառարան։
- «Բառագանձ» ծրագիրը միաւորուած է Նայիրի առգիծ բառարանների հետ, ընդլայնելով ընդգրկուած փոբր բառարանի տարողութիւնը՝ հրատարակուած հայերէնի ծաւալուն բառարաններին, օրինակ՝
 - 1. Յայերէն Բացատրական Բառարան Ստեփան Մալխասեանց, Երեւան, 1944։
 - 2. Արդի Դայերէնի Բացատրական Բառարան Էդուարդ Աղայան, Երեւան, 1976։
 - 3. Դայոց Լեզուի Դոմանիշների Բառարան Աշոտ Սուբիասեան, Երեւան, 1967։
 - 4. Յայոց Լեզուի Նոր Բառարան Գնէլ ճէրէճեան, Փարամազ Տօնիկեան եւ Արտաշէս Տէր Խաչատուրեան, Պէյրութ, 1992։
 - 5. Ընդարձակ Բառարան Յայերէնէ Անգլիերէն Մեսրոպ Գույումճեան, Պէյրութ, 1970։
 - 6. Ընդարձակ Բառարան Անգլիերենե Յայերեն Մեսրոպ Գույումճեան, Պեյրութ, 1981։
 - 7. Դայերէն Արմատական Բառարան Դրաչեայ Աճառեան, Երեւան, 1926։

Ուղղագրիչ 3.0 ծրագրաշարը կարող էք գտնել <u>www.hyspell.com</u> կայբում։ Յարկ է նշել նաեւ՝

ինչպես նախորդ տարբերակին, նոյնպես եւ 3.0 տարբերակին՝ ծրագրաշարի դպրոցական տարբերակը անվճար է բոլոր հայկական դպրոցների համար։ Դետաքրքրուողներին խնդրում ենք կապուել մեզ հետ, հետեւեալ կայքէջի միջոցաւ՝ <u>http://www.hyspell.com/Contact.aspx</u>:

Ծրագրաշարի տեղադրում

Այս մասում կ'ներկայացնենք ծրագրաշարի սկզբնական տեղադրումը օգտագործողի համակարգչի վրայ։ Այսուհանդերձ, ենթադրւում է, որ օգտագործողը արդէն ստացել եւ ներբեռնել է տեղադրման HySpell30Installer.exe նիշքը իր համակարգչում, եւ պատրաստ է` տեղակայման գործընթացին։ Տեղակայման հրահանգը ներկայացնում ենք հետեւեալ քայլերով։

- Ստեղծեք մի նոր ծրար (իմա *folder*) հետեւեալ անունով՝ HySpellInstallationFolder: Նշենք որ՝ ծրարը կարելի է ստեղծել ցանկացած տեղ, եւ ծրարի անունը այդքան էլ կարեւոր չէ։ Սակայն՝ առաջարկւում է պահել այս ծրարը, ծրագրի ապագայ ընթացիկ տարբերակների տեղադրման համար։
- 2. **Փոխադրէբ HySpell30Installer.exe նիշբը այս ծրարի մէջ։** Այս բայլը կարեւոր է ձեր կարծրապնակի կարգն ու կանոնը պահպանելու համար։
- 3. **Այնուհետեւ՝ աշխատեցնել HySpell30Installer.exe։** Տեղադրիչը ապասեղմման գործընթացքը աւարտելիս կ'ցուցադրէ Պատկեր 1-ում ցուցադրուած վահանակը։

WinRAR self-extr	acting archive
	 Press Install button to start extraction. Use Browse button to select the destination folder from the folders tree. It can be also entered manually. If the destination folder does not exist, it will be created automatically before extraction.
	, Destination folder C:\HarosDir\Tools\Dictionaries\SetupAppDeployment\Tε ▼ Browse Installation progress
	Install Cancel

Պատկեր 1 – Ապասեղմման գործընթացին յաջորդող վահանակը

- 4. Շարունակելու համար տեղակայման ընթացքը՝ սեղմէք Install կոճակը։ Սարբահիմքը կ'ցուցադրէ Windows-ի **Անվտանգութեան Չգուշացման** վահանակը, (տես Պատկեր 2)։
- Սեղմեբ Install կոճակը այս վահանակին՝ եւս։ Տեղակայման ընթացքը շարունակուելիս եւ յաջողութեան դեպքում կ'ցուցադրուի մեր ծրագրաշարի տեղադրիչը, այսինքն՝ HySpell Setup and Diagnostics ծրագրաշարը (տես Պատկեր 3)։ Նշենք նաեւ՝ որ

Windows-ի սեղանի վրայ, այս տեղադրիչ ծրագրի համար աւելացւում է մի նոր կանչագիր (իմա *shortcut*):



Պատկեր 2 – Windows-ի Անվտանգութեան Չգուշացման վահանակը

«Ծրագրաշարի Տեղադրիչ»ի պատասխանատւութիւններն են՝

- **բայլ (1)** տեղադրել բառարաններ եւ այլ անհրաժեշտ նիշքեր,
- **բայլ (2)** տեղակայել Ուղղագրիչ 3.0, հայերէն լեզուի ծրագիրը՝ Microsoft Office 2007 / 2010 / 2013 / 2016 Word ծրագրի մէջ իբրեւ ներառուկ (իմա add-in),

եւ վերջապես՝

բայլ (3) – ընտրովի մատուցել օգտագործողին, մեր կողմից ստեղծուած եւ դասաւորուած՝ ընդլայնուած ստեղնաշարերի տեղադրիչները։

Տեղադրիչը ունի նաև յղման կապեր, ցուցադրելու համար ծրագրի ուղեգիրքը, կապուելու համար hyspell.com կայքի հետ, և թարմացնելու համար բառարանների ընթացիկ տարբերակները։

Առաջիկայում, անիրաժեշտութեան դէպքում՝ համապատասխան փոփոխութիւնների և յաւելումների պատճառաւ, նախատեսւում են առանցին թողարկումներ ուղղագրութեան շտեմարանների ընթացիկ և աւելի լրացուած տարբերակների, և **Update Dictionaries** յղման կապը, ծառայում է մասնաւորապէս այս նպատակի ինքնաշխատ իրագործման համար:

ԾՐԱԳՐԻ ՈԻՂԵԳԻՐՔ

🖳 HySpell Setup and Diagnostics 3.0			×
Ծրագրաշարի Տեղադրիչ		<	HySpell Support
STEP (1) – HySpell Required Files and Dictionaries:		Install	(REQUIRED)
STEP (2) - Microsoft Office Customization Compone	nt:	Install	(REQUIRED)
STEP (3) – Armenian Extended Keyboard layouts:			
Armenian Typewriter (Extended) – Գրամեքենայ (C Armenian Phonetic (Extended) – Հնչիւնային (Ընդլ	նդլայնուած) սյնուած)		
View Keyboard Layout		Install	(OPTIONAL)
NOTE:	Lie	er Cuide .	Quatabaa
Extended Western and Eastern keyboard layouts are as Microsoft's, along with the Alt-Gr mode symbols.	e same <u>Up</u>	date Dict	ionaries
Currently installed products that are related to HySpell:			Close
Name	Version	Publishe	r
HySpell Setup and Diagnostics	1.0.1.15	HySpell	
Microsoft Office Professional Plus 2010	14.0.7015	Microsof	t Corporation
Microsoft Office Professional Plus 2010	14.0.7015	Microsof	t Corporation

Պատկեր 3 – HySpell ծրագրաշարի տեղադրիչ ծրագրի վահանակը

Շարունակենք տեղակայման ընթացքը հետեւելով այս երեք բայլերին՝

6. Սեղմեք առաջին բայլի Install կոճակը։ Ինչպես նշուել է կոճակի աջ կողմում՝ այս բայլը պարտադիր է։ Այս բայլի Install կոճակը սեղմելիս՝ սկսւում է բառարանների եւ անհրաժեշտ նիշբի տեղադրումը համակարգչի վրայ եւ ընթացբում ցուցադրւում է HySpell 3.0

Armenian Spellchecker for Office վահանակը (տես Պատկեր 4):

Այս առաջին բայլի ընթացբի, յաջող աւարտման դեպբին՝ ցուցադրւում է աւարտման վահանակը (տես Պատկեր 5)։ Յետեւելով այս վահանակի հրահանգին՝ սեղմել Close կոճակը՝ փակելու համար HySpell 3.0 Armenian Spellchecker for Office վահանակը։

7. Յաջորդ պարտադիր բայլը՝ երկրորդ բայլն է։ Ուրեմն՝ սեղմէբ երկրորդ բայլի Install կոճակը։ Ցուցադրւում է Microsoft Office Customization Installer վահանակը (տես Պատկեր 6), ընդ որուն՝ պետբ է սեղմել Install կոճակը ընթացքը շարունակելու համար։ Յաջողութեան դէպբում, ցուցադրւում է երկրորդ բայլի աւարտման վահանակը (տես Պատկեր 7)։

ԾՐԱԳՐԻ ՈԻՂԵԳԻՐՔ

B HySpell 3.0 Armenian Spellchecker for Office	
Installing HySpell 3.0 Armenian Spellchecker for Office	
HySpell 3.0 Armenian Spellchecker for Office is being installed.	
Please wait	
Cancel < B	ack Next>

Պատկեր 4 – HySpell 3.0 Armenian Spellchecker for Office վահանակը

B HySpell 3.0 Armenian Spellchecker for Office		
Installation Complete	-	
HySpell 3.0 Armenian Spellchecker for Office has been successfully installed. Click "Close" to exit.		
Cancel < Back	Close)

Պատկեր 5 – Բառարանների եւ անհրաժեշտ նիշբերի տեղադրման աւարտը

Microsoft Of	fice Custo	mization Installer
Publisher ca Are you sure	annot be e you wan	t to install this customization?
N	ame:	HySpell 3.0
Fr	om:	file:///C:/Users/haro/AppData/Local/Apps/2.0/VVQ1L9EP.LWC/HZC1EZYC.LJQ/ setution_99d9093665059ae4_0003.0000_f88ad7aa4cae6789/OfficeCustomiza tion/x86/HySpell.vsto
Pu	ublisher:	Unknown Publisher
U da	/hile Offic o not trust	e customizations can be useful, they can potentially harm your computer. If you t the source, do not install this software. <u>More Information</u> Install Don't Install

Պատկեր 6 – Microsoft Office Customization Installer վահանակ

Microsoft Office C	ustomization Installer
The Microsoft O	ffice customization was successfully installed.
Name:	HySpell 3.0
From:	file:///C:/Users/haro/AppData/Local/Apps/2.0/VVQ1L9EP.LWC/HZC1EZYC.LJQ/set ution_99d9093665059ae4_0003.0000_f88ad7aa4cae6789/OfficeCustomization/x8 6/HySpell.vsto
	Close

Պատկեր 7 – Երկրորդ բայլի յաջող աւարտի վահանակը

8. Մնում է ընդլայնուած ստեղնաշարի տեղադրումը։ Ծրագրաշարի տեղադրիչը պարունակում է երկու հանրածանօթ հայերէնի ստեղնաշարերի Alt-Gr ընդլայնուած նոր տարբերակները։ Այս բայլը, պարտադիր չէ, եւ անշուշտ՝ կախեալ է օգտագործողի ցանկութեան հետ՝ ըստ նախընտրանքի (մանրամասների համար տես յաջորդ մասերում շարադրուած ստեղնաշարերին առնչուող պարբերութիւնները)։

Տեղադրիչի մանրամասներ

Ելնելով այն ենթադրութիւնից որ՝ «Ծրագրաշարի Տեղադրիչ» ծրագիրը կարող է օգտագործուել տեղակայման ժամընթացից ետք գոնէ՝ մի քանի անգամ (մանաւանդ **Update Dictionaries** յղման կապի դեպքում), անհրաժեշտ ենք գտնում, այդ ուղղութեամբ՝ մի քանի պարզաբանումներ եւս կատարել։

«Ծրագրաշարի Տեղադրիչ» ծրագրի միջերեսային տեսքը բաժանուած է երեք մասերի։ Առաջին, վերի մասում ցուցադրուած է տեղադրման **Install** կոճակներ, հերթական երեք քայլերով, Մէջտեղում գտնւում է ուղեգրքի եւ Նայիրի բառարանների առնչուող յղման կապերը, իսկ վահանակի յատակում ցուցադրւում է օգտագործողի համակարգչի վրայ արդէն տեղակայուած` HySpell-ին եւ Microsoft-ին վերաբերող ծրագրերը։

Նշենք որ` առաջին մասի **Install** կոճակների ունակ կամ թոյլատրուած լինելը` կախեալ է համակարգչում արդէն տեղադրուած ծրագրերից։

Վահանակի մեջտեղի մասում գտնուած յղման կապերը ծառայում են հետեւեալ նպատակներին՝

- User Guide Ուղեգիրք կապը սեղմելիս բացւում է սոյն ուղեգրքի փաստաթուղթը։
- Update Dictionaries կապը ցուցադրում է Available Dictionaries վահանակը, որու շնորհիւ՝ Ուղղագրիչ 3.0 ծրագրի «բառագանձ» բաժնի առգիծ բառարանների ցանկը այժմեական է պահւում եւ ինքնաբերաբար նորոգւում։ Այս ուղղութեամբ, աւելի կ'մանրամասնենք՝ Ուղղագրիչ ծրագրաշարի օգտագործման մասերում։ Նշենք միայն այն որ՝ Available Dictionaries վահանակի Update կոճակը ոչ թէ միայն թարմացնում է Նայիրի կայքի բառարանների ցանկը, այլև՝ սոյն Ուղղագրիչի բառերի ուղղագրութեան շտեմարանները (անշուշտ, այն դեպքում երբ նոր տարբերակներ են պատրաստւում և թողարկւում HySpell.com կայքում)։

Available Dictionaries	
Selected Dictionaries:	
Name	Description
📝 Մալխասեանց (1944)	Դայերեն Բացատրական Բառարան – Ստեփան Մալխասեանց։ Դայկական ՍՍՌ Պետական
🔽 Աղայան (1976)	Արդի Դայերենի Բացատրական Բառարան – Էդուարդ Բագրատի Աղայան։ «Դայաստան» Դ
🔽 Սուբիասեան (1967)	Յայոց Լեզվի Յոմանիշների Բառարան – Աշոտ Մուրադի Սուբիասյան։ Յայկական ՍՍՅ Գիտ
📝 Խաչատուրեան (1992)	Յայոց Լեզուի Նոր Բառարան - Գնէլ Արբեպս. ճերեճեան, Փարամազ Կ. Տօնիկեան եւ Արտ
📝 Գույումճեան (1970)	Ընդարձակ Բառարան Յայերենե Անգլիերեն – Մեսրոպ Կ. Գույումճեան։ Տպարան USLUU,
📝 Գույումճեան (1981)	Ընդարձակ Բառարան Անգլիերենե Դայերեն – Մեսրոպ Կ. Գույումճեան։ Կ. Տօնիկեան եւ Եղ
🔽 Աճառեան (1926)	Յայերեն Արմատական Բառարան – Յրաչեայ Աճառեան։ Երեւանի Յամալսարանի Յրատար
Reference dictionaries are pe	riodically updated and provided by: <u>www.nayiri.com</u> Update Cancel

Պատկեր 8 – Նայիրի բառարանների ընթացիկ ցանկ ցուցադրող վահանակը

Վերջապես, նշենք որ՝ վահանակի առաջին մասի՝ վերջին քայլի բաժնի ցանկում՝ տեսանելի է երկու ստեղնաշարերի տարբերակներ, իսկ ցանկի յատակում դրուած View Keyboard Layout կոճակի շնորհիւ՝ կարելի է հեշտութեամբ նախադիտել ընտրուած ստեղնաշարի ստեղների դասաւորումը (աւելի մանրամասնօրեն յաջորդ մասում)։

Ստեղնաշարերի նախադիտում և մանրամասներ

Ժամանակին` երբ համակարգիչը չէր ստեղծուած, եւ գրամեքենան դեռ օգտագործւում էր ամենուրեք, Յայաստանում, ինչպես նաեւ` արտերկրի հայահոծ գաղութներում, հայերեն գրելու եւ խմբագրելու համար օգտագործւում էր, այսպես կոչուած` «գրամեքենայ» ստեղնաշարը։ Այս ստեղնաշարի վրայ ստեղներն դասաւորուած էին ըստ` հայերեն լեզուի բառակազմական յաճախականութեան և բաւականի արդիւնաւետ կերպով։ Իսկ` համակարգչի տարածման ընթացքում, երկար ժամանակ մինչեւ 80-ական թուականներին` հայկական ստեղնաշարերի վրայ դեռ տիրում էր այս գրամեքենայի դասաւորման տարբերակը։ 90-ական թուականների վերջում, հայերեն լեզուն հսկայ անկում ապրեց գրեթէ` բոլոր ոլորտներում, իսկ համակարգչային գիտութիւնների երբեմնի` հայկական համաշխարհային ներդրումը (խօսքս` Մերգելեան դպրոցի մակարդակի մասին է) մեր հանրապետութեան բոլոր այլ հարստութիւնների ճակատագրի նման` կողոպտուեց եւ հիմնայատակ քանդուեց։

Իբրեւ վերակառուցում, մեծ ուշադրութեամբ` հետեւելով մեր աւերուած բերդի բեկորների հետքերով, փորձեցինք` ի միջի այլոց` վերստին շրջանառութեան մեջ դնել «գրամեքենայ» ստեղնաշարի դասաւորումը։ Այս առումով չափազանց օգտակար եղաւ Ռուբեն Թարումեանի բազմանպատակ եւ հեռատես` «Չրոյցներ Դամակարգչի Մասին» գիրքը։

Սակայն՝ Windows Vista-յի թողարկման առթիւ, Microsoft-ը արդէն իսկ՝ շրջանառութեան մէջ դրեց՝ ոչ թէ մէկ՝ այլ երկու QWERTY շարուածքով հայերէնի ստեղնաշարեր։ Այս Microsoft-ի ստեղնաշարերը, բացի հայերէնին չվերաբերող դասաւորութեան, ունեն նաեւ՝ մի քանի սխալներ եւ օտար նշանների պակաս։ Նշաններ որոնք յաճախ են օգտագործւում հայերէն գրութեան մէջ։ Microsoft-ի այս ստեղնաշարերի շարուածքի խնդիրը կարծես՝ ոչ մի արգելքի չյանգելով արդէն տարածուեց աշխարհով մէկ։ Windows 7-ում, ի հեճուկս ակնյայտ թերութիւնների՝ այս նոյն ստեղնաշարերը, իրենց անհեթեթ՝ **Armenian Eastern** եւ **Armenian Western** անուններով անարգել շարունակուեցին։

Այսինքն՝ օրինակ եթէ «բեմ» բառը Լիբանանահայը՝ հնչեցնում էր «փեմ» բառի նման, եւ երեւի հնչիւնից խաբուած երբեմն՝ բառի ուղղագրութիւնը վրիպում էր, ապա՝ այս **Armenian Western** ստեղնաշարի շնորհիւ, օգտագործողի աչքի առաջ՝ մի նոր շփոթ եւս ստեղծուեց։ Մի խօսքով՝ ժամանակին՝ հնչիւնից մեր ականջն էր խաբւում, չէր հերիքում, դրան աւելացրին US ստեղնաշարի «P» ստեղնով շփոթեցնելու հնարը, որպեսզի տեսողութիւնով էլ խաբուենք։

Ինչեւէ շարունակենք։

Windows 8-ում, այս անհեթեթ ու թերի ստեղնաշարերը չդիմացան, եւ պիտակուեցին իբրեւ՝ «Legacy» ստեղնաշարեր։ Արդիւնքում՝ Microsoft-ը թողարկեց երկու աւելի ճիշտ ստեղնաշարեր հետեւեալ արդարացի անուններով՝

- Armenian Typewriter
- Armenian Phonetic

Թէեւ՝ այս Windows 8-ի ստեղնաշարերը արդեն օժտուած են Alt-Gr ընդլայնման բանալիով, մեր

ստեղնաշարերը աւելի ընդլայնուած Alt-Gr տարբերակներն են։ Ուստի` խնդրում ենք օգտագործել հետեւեալ ստեղնաշարերից մէկը, մանաւանդ երբ` դեռ նոր էք սովորում հայերէն լեզուով խմբագրել (այս դէպքում, նախընտրելի է ստեղնաշարերի Գրամեքենայ տարբերակը)։

- Armenian Typewriter (Extended) Գրամեքենայ (ընդլայնուած),
- Armenian Phonetic (Extended) Յևչիւնային (ընդլայնուած),

Որպէսզի՝ շփոթի առիթ չստեղծուի՝ խնդրում ենք **View Keyboard Layout** կոճակի շնորհիւ (տես Պատկեր 3), նախադիտել ձեր ընտրած ստեղնաշարի ստեղների դասաւորումը, նախ քան՝ համակարգչի վրայ տեղադրելը։

Յանկացած ստեղնաշարը ընտրելիս եւ View Keyboard Layout կոճակը սեղմելիս, ծրագիրը ցուցադրում է ստեղների ամբողջական դասաւորումը հետեւեալ վահանակում (օրինակ՝ գրամեբենայի դեպբում տես Պատկեր 9-ը)։

`	\$	à	-	,	:	0)	0	t	η	Backspace
Tab	б	ф	F	u	J	n	L	Ч	D	ବ	ð	g	»
Caps	2	ų	q	ե	u	u	þ	տ	h	щ	p		Return
Shift	•	4	п	٤	J	q	L	₽	խ	2	n	S	hift
Contro	5l	Alt				S P					Alt	c	Control
S S	ift Kev	Alt-I	Gr Kev										

Պատկեր 9 – Ստեղների դասաւորումը ցուցադրող վահանակ (այս դեպբում «գրամեբենայ» ստեղնաշարի)

Վահանակի յատակի ձախ կողմում զետեղուած են **Shift Key** և **Alt-Gr Key** ստուգավանդակները։ Այս ստուգավանդակների փոփոխութեամբ կարելի է ցուցադրել ստեղնաշարի բոլոր ստեղների արժէքները ըստ դիրքերի։ Նշենք որ Alt-Gr ստեղնը, ստեղնաշարի աջ կողմի Alt ստեղն է, եւ ըստ էութեան՝ սա տարբերում է ձախ Alt–ի արժէքից։

Յաջորդող երկու էջերում՝ ներկայացրել ենք հայերենի երկու ստեղնաշարերի ընդլայնուած տարբերակների դասաւորման պատկերները։ Օրինակ՝ ըստ Պատկեր 10-ին, եթե աջ ձեռքով սեղմուած պահենք աջ կողմի Alt ստեղնը, ապա կարող ենք տպել թուանշանները ճիշտ նոյն ստեղների դիրքերով ինչպես՝ US International ստեղնաշարի դեպքում։ Իրականում՝ թուերի շարքի Shift և առանց Shift ստեղները բոլորովին համապատասխանում են US ստեղնաշարին։

~	!	@	#	\$	%	۸	છ	*	()	_	+	Backspace
Tab	1	**	` 17	"	\checkmark	00	f	Ø	×	±	{	}	I
Caps	£	C R	£	1/	8 3/8	3 5/	́в 7/а	, <mark>в</mark>	- 7	£	: "	F	Return
Shift		Æ	¥	©	1/4	1/2	3/4	ſ	<	>	?	S	hift
Contr	ol	Alt			80	s					Alt	c	ontrol

Պատկեր 10 – Ընդլայնուած Գրամեքենայ ստեղնաշարի դասաւորում (Armenian Typewriter – Extended Layout)

•	1	2	3	4	5	6	7	8	9	0	-	=	Backspace
Tab	-	"	,	,	‰	†	+	Ĵ	S	8]]	1
Caps	€	TM	Nº	ป	յ մե	մի	լ վլ	ւ մի	u	. ;	'		Return
Shift		æ	§	¢	≤	2	4	L	,		/	1	Shift
Contro	đ	Alt			·	S P]	~	**		Alt		Control

1	\$	2	8	Ъ	-	_	և	,	(0	F	า	Backspace
Tab	6	Φ	P	U	U	n	F	Ч	2	6	σ	8	«
Caps	S	2 4	1 9	+ t	; U	ιιι	, r	· S	; ;	7 F	ח ר		Return
Shift	0	ф	ĥ	2	З	2	L	£	ŀ	5	ĥ		Shift
Control Alt						s	P]				Alt		Control

x	\$	۵		,	:	0		')	0	Ł	η	Backspace
Tab	б	ф	P	u	IJ	n	L	Ч	D	ବ	ð	g	»
Caps	5	2 4	q	ե	u	ն	þ	r	ו <mark>h</mark>	u	ı n		Return
Shift	-	đ	<mark>դ</mark>	٤	J	q	L	₽	խ	2	n	S	hift
Contr	ol	Alt		-2	-2	S P]		24. JP		Alt	c	Control

ԾՐԱԳՐԻ ՈԻՂԵԳԻՐՔ

	Control	Alt	<u>S P</u>	Alt	Control
l					

Պատկեր 11 – Ընդլայնուած Յնչիւնային ստեղնաշարի դասաւորում (Armenian Phonetic – Extended Layou
--

~	!	@	#	\$	%	^	8	*	()	_	+	Backspace
Tab	1-	"	.,,	"	\checkmark	00	f	Ø	×	±	{	}	I
Caps	f	C R) £	1	8 3/8	5/	8 7	8 ≈	≠		. "		Return
Shift		Æ	¥	Ô	1/4	1/2	3/4	ſ	<	>	?		Shift
Contro	ol	Alt		e	990 - 192	s	<u>P]</u>	сч	~		Alt		Control

•	1	2	3	4	5	6	7	8	9	0	- [=	Backspace
Tab	-	"	,	,	%	†	‡	Ĵ	\$	8]]	/
Caps	€	TM	' Nº	u u	յ մե	մի	ի վլ	ս մի	u	. ;	'		Return
Shift		æ	ş	¢	5	2	•	L	,	•	/		Shift
Contro	ol	Alt				S P]				Alt		Control

-	E	9	Φ	2	2	F	۱L	r	5	6	_	ъ	Backspace
Tab	Ð	Π	<mark>ь</mark>	n	S	C	F	h	0	۳	ŀv	σ	5
Caps	l	I U	1 P	e B	ρ	- - 7	e	5 L	I L	:	"		Return
Shift	0	2	า	8	પ	P	J	U	<	>	0	1	Shift
Contro	ol	Alt				s					Alt		Control

×	Ł	P	փ	δ	2	L	Ŀ	p	Ł	б		đ	Backspace
Tab	Ę	n	ե	n	ហ	D	L	þ	0	щ	խ	ð	2
Caps	U	u	u	ŋ 9		F 1	ן ו	l	4	L ;			Return
Shift	-	q	η	g	ų	þ	ն	J	,		/		Shift
Contr	ol	Alt		17274 J	nara ar	s	P				Alt		Control

ԾՐԱԳՐԻ ՈԻՂԵԳԻՐՔ

Փաստօրեն՝ Alt-G	r ընդլայնումով	աւելացուել են ւ	առնուազն՝	հետեւեալ նշանները՝
-----------------	----------------	-----------------	-----------	--------------------

Alt-Gr:	•	1	2	3	4	5	6	7	8	9	0	-	=	[]	١	;	"	,		1	
Alt-Gr + Shift:	~	!	@	#	\$	%	۸	ծ	*	()	_	+	{	}	Ι	:	"	<	>	?	
Աւելացուել են	նա	եւ բ	ւազ	մալ	թիւ	այլ	նշս	սնն	եր,	opþ	սնա	ц `										
		0	,	*	+	6	<i>m</i> C	у пл	м ъ		·C	. 0	- 0		a.	- 0				ß	1	~

All-GI.	_	/00	I		+	C	Ŧ		14:	uu	u	u	պո	Чu	պ	u	•••	æ	3	-	2 2	-	
Alt-Gr + Shift:	_		∞	f	Ø	×	±	£	®	£	1⁄8	³ /8	5/8	7⁄8	\approx	¥	Æ	¥	©	1⁄4	1⁄2	¾	ſ

Իբրեւ եզրափակիչ ակնարկ ստեղնաշարերի դասաւորման շուրջ, զգուշացնենք տարբերութիւնը US-ի եւ հայերենի միջեւ տողադարձի նշանները։ Սրանք նոյն արժեքը չունեն եւ մեր Ուղղագրիչ 3.0 ծրագրի Word տարբերակում անհրաժեշտ է հայերեն գրութեան մէջ տողադարձ ընդունել միայն հայերենի տողադարձ նշանը։ Գրամեքենայի պարագայում, սա Shift+5 ստեղն է, իսկ Յնչիւնային ստեղնաշարում՝ «-» ստեղն է (սա տարբեր է Hyphen-minus տառից, այդ գծիկի համար կարելի է օգտագործել Alt-Gr + -)։

Ստեղնաշարերի տեղադրում եւ ձեւակազմում

Նախ քան «Ծրագրաշարի Տեղադրիչ»ով ստեղնաշար տեղադրելը, կ'արժէ զայն ընտրել, նախադիտել, եւ հաստատել որ՝ հայերէն տառերի ստեղների դասաւորումը համընկնում է՝ ձեզ ծանօթ ստեղնաշարին։ Օրինակ՝ եթէ վարժ էք Microsoft-ի «Armenian Phonetic» ստեղնաշարին, ապա՝ մեր տեղադրիչ ծրագրում պէտք է ընտրէք «Armenian Phonetic (Extended) – Յնչիւնային (Ընդլայնուած)» ստեղնաշարը, եւ նախադիտէք զայն **View Keyboard Layout** կոճակը սեղմելով։ «Ծրագրաշարի Տեղադրիչ» ծրագրում, ստեղնաշար տեղադրելու համար, հարկ է ընտրել քայլ (3) ցանկից եւ սեղմել **Install** կոճակը։ Ծրագիրը կ'արձագանքի օրինակ՝ հետեւեալ վահանակով՝



Պատկեր 12 – Ստեղնաշար տեղադրելու ընդունման հարցը

Տեղադրումը շարունակելու համար սեղմել **Install** կոճակը, եւ ապա` սպասել մինչեւ աւարտման վահանակի ցուցադրումը (տես Պատկեր 13)։

🔁 Armenian Phonetic - Extended	
Installation Complete	
Armenian Phonetic - Extended has been successfully installed.	
Click "Close" to exit.	
Cancel < <u>B</u> ack	Close

Պատկեր 13 – Ստեղնաշարի տեղադրման աւարտման վահանակը

Յաճախ, հայերեն խմբագրման ընթացքին՝ անհրաժեշտ է լինում մի քանի լեզուների ստեղնաշարերի միջեւ շրջել։ Որպեսզի այս շրջումը ճկուն եւ անընդհատ կերպով կատարուի, աւելի ձեռնտու է՝ ստեղնաշարերի փոփոխումը կառավարուի յատուկ ստեղների միակցութեան շնորհիւ։ Այս առումով, առաջարկում ենք օգտագործել Windows սարքահիմքի **Ձախ Alt + Shift** ստեղների միակցութեան ձեւը։ Օրինակ՝ **US** և **Armenian Phonetic – Extended** ստեղնաշարերի դեպքում՝ կարելի է սահմանել հետեւեալ միակցութիւնները՝ ձախ ձեռքով **Shift + Alt** սեղմելիս՝ աջով **0** ստեղնը սեղմեք, ստեղնաշարը կ'շրջուի օրինակ՝ **US**-ի, իսկ երբ **9** ստեղնը սեղմեք կ'շրջուի **Armenian Phonetic – Extended** ստեղնաշարի։

Կարգաւորելու համար ստեղնաշարերի փոփոխման այսպիսի եղանակ, Windows 7-ում օրինակ` կարելի է իրականացուել հետեւեալ հրահանգով`

- (1) Բացել Control Panel եւ ընտրել Region and Language:
- (2) Region and Language վահանակում ընտրել Keyboard and Languages մասը:
- (3) Սեղմել Change keyboards կոճակը։
- (4) Text Services and Input Languages վահանակում ընտրել Advanced Key Settings մասը։ Այս մասում ցուցաբերւում է համակարգչի վրայ տեղադրուած բոլոր ստեղնաշարերը։
- (5) Hot keys for input languages ցանկից ընտրել ցանկացած ստեղնաշար եւ սեղմել Change Key Sequence կոճակը:
- (6) Change Key Sequence վահանակում, նախ՝ ընտրել Enable Key Sequence ստուգավանդակը, այնուհետեւ՝ ձախ սփռուն ցուցակում ընտրել Left Alt + Shift, իսկ աջում ցանկացած թիւ (օրինակ՝ 0 US-ի դէպքում եւ 9 հայերէնի)։ Ապա սեղմել OK կոճակը։
- (7) Այս ձեւով շարունակել բոլոր ստեղնաշարերի համար, ապա **Text Services and Input Languages** վահանակը գրանցել սեղմելով **OK** կոճակը, եւ մի հատ էլ **OK**` գրանցելու

համար Region and Language վահանակը։

Ինչպե՞ս վերատեղակայել ծրագրաշարը

Ինչպես տեսանք, «Ծրագրաշարի Տեղադրիչ» ծրագիրը բացի տեղակայման գործառոյթից ունի նաեւ տրամածանական հնարաւորութիւն։ Ծրագիրը վահանակի յատակում ցուցադրում է տուեալ համակարգչի վրայ տեղադրուած HySpell-ի եւ Microsoft Office ծրագրերին առնչուող բոլոր ծրագրաշարերը։ Արդիւնքում՝ տեղադրման կոճակների թոյլատրութիւնը կախեալ է սոյն ծրագրերի տեղակայման իրավիճակի հետ։ Սակայն՝ խիստ անհրաժեշտ դեպքում, երբեմն՝ ծագում է վերատեղակայման խնդիրը։ Այս դեպքում, որպես այլընտրանք՝ կարելի է տուեալ տեղակայուած ծրագրաշարը (կամ ծրագրաշարի մասը), Windows սարքահիմքի միջոցաւ, նախ՝ անտեղակայել եւ դուրս հանել համակարգչից, եւ ապա օգտագործելով մեր տեղադրիչը վերատեղակայել ծրագրաշարը (կամ համապատասխան մասը)։ Windows 7-ում օրինակ՝ սա կարելի է իրականացուել հետեւեալ իրահանգով՝

- (1) Բացել Control Panel եւ ընտրել Programs and Features:
- (2) Ապա՝ գտնել եւ ընտրել ցանկացած HySpell-ի ծրագրաշարի մաս։
- (3) Աջ մկնիկը սեղմելով ընտրած տողի վրայ, ընտրել **Uninstali**:

Չգուշացնենք, որ` այս գործողութիւնը կատարել ուշադրութեամբ, որպեսզի` սխալմամբ դուրս չհանուեն այլ ծրագրեր, որոնք թերեւս` ոչ մի կապ չունեն մեր ծրագրերի հետ։

Տեղակայուած տառատեսակները

Յայերէնի տառատեսակների վերաբերեալ, տեղադրիչի առաջին քայլում արդէն` տեղակայւում են Ռուբէն Թարումեանի Arian AMU եւ մի քանի այլ Արիանի տարբերակներ։ Այս ուղղութեամբ մանրամասների համար, այցելել հետեւեալ կայքէջը` <u>http://arian.tarumian.am/</u>։ Ի միջի այլոց` այս գրբոյկը օգտագործում է Arian AMU տառատեսակները։

Ստորեւ, ցուցադրում ենք նաեւ հետեւեալ նմուշները՝

Arian AMU	Մարդ կայ` ելել է շալակն աշխարհի, Մարդ կայ` աշխարհն է շալակած տանում։
Arian AMU Serif	Մարդ կայ` ելել է շալակն աշխարհի, Մարդ կայ` աշխարհն է շալակած տանում։
Arian AMU Mono	Մպրդ կպյ՝ ելել Է շպլպկն պշխպրհի, Մպրդ կպյ՝ պշխպրհն Է շպլպկպծ sպնում։
Arian AMU Spitak	Մարդ կայ՝ ելել է շալակն աշխարհի, Մարդ կայ՝ աշխարհն է շալակած տանում։

Arian Grgi	Մարդ կայ՝ ելել է շալակն աշխարհի, Մարդ կայ՝ աշխարհն է շալակած տանում։
Arian Grgi Italic	Մա ոդ կայ` ելել է շալակն աշխա ռնի, Մաոդ կայ` աշխառնն է շալակած տանում։

Չմոռանանք նշելու որ այս տողերը, մեծ բանաստեղծ՝ Պարոյր Սեւակի տողերն են, քաղուած իր «Մարդ Կայ, Մարդ էլ» ճշմարիտ եւ իմաստալից ոտանաւորից։

Ուղղագրիչի մանրամասներ

Սոյն մասում, ենթադրւում է, որ արդեն՝ տեղակայուած է Ուղղագրիչ 3.0 ծրագրաշարը, այսինքն՝ «Ծրագրաշարի Տեղադրիչ» ծրագրի առնուազն՝ առաջին եւ երկրորդ քայլերը աւարտուել են յաջողութեամբ, եւ Microsoft Office 2007, 2010, 2013 կամ 2016 Word ծրագրի վերի **Review** մասում՝ տեսանելի է HySpell-ի **ԱԲԳ** կոճակը (օրինակ՝ տես Պատկեր 14)։



Ղատկեր 14 – Review մասի ԱԲԳ կոմակը եւ HySpell-ի ընտրացանկի միւս գործառոյթները

Եթե **Review** թերթիկում **UP4** կոճակը չի երեւում, ապա՝ պետք է վերադառնալ այս գրբոյկի «Ծրագրաշարի տեղադրում» մաս, եւ նախ՝ փորձել տեղադրել ծրագիրը։ Իսկ եթէ ըստ՝ «Ծրագրաշարի Տեղադրիչ» ծրագրի՝ Ուղղագրիչ 3.0-ն արդեն տեղակայուած է, օրինակ՝ տեղադրիչի վահանակի յատակում **Currently installed products that are related to HySpell** ցուցակում արդեն՝ պարունակուած է **HySpell 3.0** ծրագրի անունը, ապա՝ հետեւել գրբոյկի «Ինչպէ՞ս վերատեղակայել ծրագրաշարը» մասին։

Պատկեր 14-ում տեսանելի է Ուղղագրիչ 3.0-ի գլխաւոր գործառոյթների ցուցակը։ Ստորեւ ներկայացնենք այս գործառոյթները՝

Check Armenian Spelling (Ուղղագրել)

Thesaurus (Բառագանձ) Convert Orthography (Փոխարկել Ուղղագրութիւնը) Convert ARMSCII-8 to UNICODE (Փոխարկել Նիշբը) Options (Ընտրանբ)

Check Armenian Spelling (Ուղղագրել) ընտրելիս, ծրագիրը աշխատեցնում է գործուն փաստաթղթի հայերեն գրութեան ուղղագրութեան ստուգման գործընթացքը, ցուցադրելով հերթական վրիպումները աջ կողմում՝ խնդրափեղկի Ուղղագրիչ մասի մէջ։ Սա, ծրագրի գլխաւոր գործառոյթն է, այդ իսկ պատճառով, միեւնոյն գործընթացը կարելի է կանչել՝ սեղմելով ԱԲԳ կոճակը (փոխան ընտրելու սփռուն ցուցակից)։ Ուղղագրիչ վահանակի միջոցաւ ուղղագրութեան ստուգման գործընթացքի մասին տես յաջորդ մաս։



Պատկեր 15 – Ուղղագրիչի վահանակը ուղղագրութեան ստուգման գործընթացբում

Options (Ընտրանբ) ընտրելիս, ծրագիրը ցուցադրում է **Ընտրանբ** վահանակը (տես Պատկեր 16), որտեղ՝ հնարաւորութիւն է դրւում օգտագործողին՝ փոխել ուղղագրութեան կանոնը, խառն այլագրութեամբ դիտելու պայմանը եւ կարգաբերել ու գրանցել նախընտրանքները։ Մասնաւորապես՝

- «Ուղղագրութիւն» ընտրանքի շնորհիւ կարելի է թելադրել ծրագրին ուղղագրել՝ նոր թէ դասական ուղղագրութեան կանոնով,
- «Խառն այլագրութեամբ դիտել» ստուգավանդակի շնորհիւ թոյլատրւում է ARMSCII-8 եւ UNICODE խառն այլագրութեամբ գրութիւնը՝ ճիշտ դիտել Ուղղագրիչի վահանակներում,
- Իսկ «Կարգաբերել իբրեւ սկզբնական նախընտրանք» ստուգավանդակի շնորհիւ՝ կարելի է թելադրել ծրագրին, յետայսու՝ մշտական դարձնել ընտրանքների փոփոխութիւնները։

Ընտրանք	23
Ուղղագրութիւն ։	Դասական Ուղղագրութիւն 🛛 🔻
	🗌 Ստուգել քերականութիւնը
	🔽 Խառն այլագրութեամբ դիտել
🥅 Կարգաբերել ի	ւբրեւ սկզբնական նախընտրանք
	գրանցել Չեղարկել

Պատկեր 16 – Ուղղագրիչի Ընտրանբ վահանակը

Ուրեմն՝ եթե օգտագործողը նախընտրում է նոր ուղղագրութեամբ աշխատել, ապա՝ անհրաժեշտ է, Ուղղագրութիւն սփռուն ցանկում՝ ընտրել Նոր Ուղղագրութիւն արժեքը, եւ ընտրել «Կարգաբերել իբրեւ սկզբնական նախընտրանք» ստուգավանդակը։ Այնուհետեւ՝ սեղմել Գրանցել կոճակը։ Այսպիսով, նոր ուղղագրութեամբ ստուգելը՝ դառնում է մշտական։

Thesaurus (Բառագանձ) ընտրելիս, Microsoft Word ծրագրի աջ կողմում՝ տեսանելի է դառնում HySpell-ի խնդրափեղկը, տես օրինակ՝ Պատկեր 15-ի աջ կողմը։ Խնդրափեղկը կազմուած է հետեւեալ ղեկավարման մասունքներից՝

- Բառ խմբագրման դաշտ, որտեղ ներմուծւում է որոնուող բառը,
- Բառակազմ ցուցակ, որտեղ ցուցադրւում է որոնման արդիւնքների բառակազմերը,
- Որոնել կոճակ, որը գործադրում է բառի բացադրութեան որոնումը,
- **Բացատրութիւն** ցուցադրիչ, որտեղ ցուցադրւում են բառի բացատրութիւններ,
- **Տես Նաեւ** յղման կապերի ցանկ, որտեղ ցուցադրւում են բառի վերաբերեալ յղման կապեր դեպի բոլոր Նայիրի բառարաններին,
- **Ընտրուած Բառ** ցուցադրիչ, որտեղ ցուցադրւում է փաստաթղթում գործուն բառի ուղղագրութեան վրիպման վիճակը (կարմիր գոյնով երբ վրիպում է)։

Խնդրափեղկի օգտագործման մանրամասները կ՞ներկայացուեն յաջորդ մասերում։

Convert Orthography (Փոխարկել Ուղղագրութիւնը) սեղմելիս ցուցադրւում է հետեւեալ ընտրացանկը՝

- To Reformed (Նոր ուղղագրութեան)
- To Classical (Դասական ուղղագրութեան)

To Reformed (Նոր ուղղագրութեան) սեղմելիս՝ գործուն փաստաթղթի հայերեն գրութիւնի (միայն հայերեն մասերը) ուղղագրութիւնը՝ փոխգործուն կերպով փոխարկւում է դասականից նոր ուղղագրութեան։ Իսկ՝ **To Classical (Դասական ուղղագրութեան)** սեղմելիս՝ փոխարկման գործընթացը ընթանում է նոր ուղղագրութիւնից դեպի դասականը։ Օգտագործման մանրամասները կ'ներկայացուեն յաջորդ մասերում։

Convert ARMSCII-8 to UNICODE (Փոխարկել Նիշբը) ընտրացանկի տակ կայ հետեւեալը՝

- Custom.dic
- Any TEXT file (Այլ տառաթուային նիշբ)

Առաջինը հնարաւորութիւն է տալիս Ուղղագրիչ 1.0 տարբերակից արտադրուած Custom.dic նիշքը, որը ARMSCII-8 այլագրութեամբ էր, փոխարկել UNICODE տարբերակի, օգտագործելու համար Ուղղագրիչ 3.0-ի հետ։ Իսկ՝ **Any TEXT file (Այլ տառաթուային նիշբ)** սեղմելու դեպքում՝ ցուցադրւում է հետեւեալ վահանակը՝

Փոխարկել ARMSCII-8 Նիշքը UNICODE–ի 🗮 🎽				
ARMSCII-8 տառաթուային ներածուող նիշք ։				
Ներածուող նիշքը UTF-8 է 📃				
UNICODE արտածման նիշը ։				
Փոխարկել Փակել				

Պատկեր 17 – ARMSCII-8-ից UNICODE փոխարկման վահանակը

Ուղղագրել վահանակի միջոցաւ

Microsoft Word ծրագրում կարելի է ուղղագրութիւնը ստուգել հետեւեալ երկու տարբեր ձեւերով՝

- (1) Առաջին ձեւի պարագայում, օգտագործողը սեղմում է **Review** թերթիկի **ABC** կոճակը, այնուհետեւ՝ փոխգործուն կերպով ուղղագրական վրիպումները ցուցադրւում են մէկ առ մէկ՝ խնդրափեղկի **Ուղղագրիչ** վահանակի շնորհիւ (օրինակ՝ տես Պատկեր 15)։
- (2) Երկրորդ ձեւի պարագայում, փաստաթղթի շարադրանքում վրիպումները ինքնաշխատ կերպով ցուցադրւում են կարմիր ընդգծումներով։

Մեր, Ուղղագրիչ 3.0 տարբերակում լիակատար մշակուած է ուղղագրութիւնը ստուգելու

առաջին ձեւը միայն։ Նշենք որ՝ երկրորդ ձեւի անմշակ թողնելու պատճառը մեզնից կախեալ չէր, այլ պարզապես՝ Microsoft Office Word ծրագրի հեղինակները՝ ծրագրաւորողներին առիթ չեն տուել՝ մի քանի Word ծրագրի գործառոյթներ կառավարելը, որոնք անհրաժեշտ են երկու խնդիրներ լուծելու։ Մեկը՝ մեր նշած ուղղագրութեան ստուգման երկրորդ ձեւն է, իսկ միւսը՝ Word ծրագրում տողադարձելու խնդիրն է։

Գրքոյկի այս մասում, կ'ներկայացնենք ուղղագրութեան ստուգման առաջին ձեւի մանրամասները։ Յայերեն գրութեան պարագայում ուղղագրութեան ստուգումը իրագործւում է **ԱԲԳ** կոճակի շնորհիւ։ Այս կոճակը սեղմելիս, սկսւում է ստուգումը՝ գործուն փաստաթղթի գրութեան ներածման շարժագծի ներկայ դիրքից ետք գտնուող՝ հայերեն մասերի վրայ, եւ գտնելով առաջին վրիպումը՝ ցուցադրւում է ստուգման վահանակի մեջ, օրինակ՝ տես Պատկեր 18-ի վահանակը (նաեւ Պատկեր 15)։

5	HySpell 🔹 🗙
1	Բառարան Ուղղագրիչ
	ձախից-աջ
	Անտեսել Անտեսել ամեն +
	ձախից աջ
	ձախիլ
	Ուղղել Ինքնաշտկել

Պատկեր 18 – Ուղղագրութիւնը ստուգող վահանակը

Ուղղագրիչի ստուգման վահանակը բաղկացած է հետեւեալ դաշտերից եւ ղեկավարման կոճակներից՝

- Ուղղագրութիւնը վրիպող բառ (կարմիրով)։
- **Անտեսել** / **Ստուգել** կոճակ, որը հնարաւորութիւն է տալիս ընթացիկ վրիպումը անտեսել, եւ ստուգման գործընթացը շարունակել։
- Անտեսել Ամեն կոճակ, որպեսզի անտեսել միեւնոյն վրիպումը ամբողջ գրութեան մեջ։
- (+) Աւելցնել Բառարան կոճակ, որը հնարաւորութիւն է տալիս՝ բառարանում չգտնուող բառը աւելացնել։ Այս կոճակը սեղմելիս՝ ցուցադրւում է Պատկեր 19-ում ցուցադրուած վահանակը։
- **Առաջարկներ** ցուցակ, որտեղ ցուցադրւում է վրիպող բառի վերաբերեալ առաջարկուած ուղղումները։
- Ուղղել կոճակ, ուղղելու համար ընթացիկ վրիպումը։
- Ինքնաշտկել կոճակ, որը հնարաւորութիւն է տալիս վրիպուած բառը համապատաս-

խան ուղղումով ինքնաշտկման ցանկ աւելացնել։

Աւելցնել Նոր Բառը
Նոր Բառ ։ (Հոլովման համար ներածել բառի արմատը)
ստուգավանդակ
Հոլովական Ձեւ ։
Wahnind
🔘 Գոյական/Ածական
🔘 Рщ
🔘 Այլտեսակ
Բառի Օրինակ ։ (Ներածել նման խոնարհուող բառը)
Աւելցնել Չեղարկել

Պատկեր 19 – Բառարանին նոր բառ աւելացնելու վահանակը

Ուղղագրութեան ստուգման վահանակում երբ վրիպում է ցուցադրւում, օգտագործողին դրւում է հետեւեալ գլխաւոր այլընտրանքները՝

- Ուղղել սխալը,
- Անտեսել սխալը,
- Աւելացնել բառը բառարանում։

Ուղղելու համար սխալը, նախ ուշադրութեամբ ստուգել **Առաջարկներ** ցուցակում ընտրուած տողի փոխարինող բառը, ապա՝ սեղմել **Ուղղել** կոճակը։ Այնուհետեւ գրութիւնում սխալը բառը փոխարինւում է **Առաջարկներ** ցուցակում ընտրուած բառով, եւ ծրագիրը՝ ստուգումը շարունակելով անցնում է յաջորդ վրիպումին, եւ այսպես շարունակաբար մինչեւ որ այլեւս՝ վրիպումներ չեն մնում։

Անտեսել կոճակը սեղմելիս՝ ծրագիրը անտեսում է ներկայ վրիպումը եւ ստուգելով անցնում յաջորդին։

Լինում են դէպքեր երբ ծրագրի կողմից վրիպում ճանաչուած բառը` իրականում վրիպում չէ, այլ ընդամենը ուղղագրական բառարանից պակասող բառ։ Այս դէպքում անիրաժեշտութիւն է ստեղծւում բառը աւելացնել բառարանում։ Սեղմելով **(+)** Աւելցնել Բառարան կոճակը` ծրագիրը կ'ցուցադրէ Պատկեր 19-ի վահանակը։ Բառ աւելացնելու դէպքում անհրաժեշտ է խիստ զգուշութիւն, ըստ այնմ` առաջարկում ենք հետեւեալ օրենքների պահպանումը`

- (1) Նոր Բառ խմբագրման դաշտում բառը վերածել ամենապարզ անհոլով ձեւի։ Բայերի դեպքում փոխարինել բայի անորոշ (դերբայի) ձեւը, օրինակ՝ խօսիլ (կամ խօսել), խաղալ, թողուլ, եւայլն։
- (2) Որոշել բառի տեսակը, օրինակ գոյական/ածական, եւայլն։ Այնուհետեւ՝ վահանակում

ընտրել համապատասխան **Գոյական/Ածական** կամ **Բայ** կլոր կոճակը։

(3) Կայ նաեւ այլընտրանք՝ նմանեցնելով խոնարհման ձեւը բառարանում գոյութիւն ունեցող մի այլ բառի հետ։ Այդ դեպքում ընտրել **Այլ տեսակ** կոճակը եւ ներմուծել այդ նմանուող բառը **Բառի Օրինակ** խմբագրման դաշտում։

Օրինակ՝ ենթադրենք անհրաժեշտութիւն ենք զգում աւելացնել «ստուգավանդակների» բառը։ Նախ նշենք որ՝ հայերեն լեզուն հոլովման/խոնարհման առումով հարուստ լեզու է, այս բառի վերաբերեալ կան բազմաթիւ հոլովման ձևեր, օրինակ՝

ստուգավանդակ, ստուգավանդակ**ի**, ստուգավանդակ**ով**, ստուգավանդակ**ներ**, եւայլն։

Ուրեմն՝ անխոհեմ կ'գտնուենք եթէ աւելացնենք բառը միայն մէկ հոլովման ձեւով։ Անհրաժեշտ է գտնել բառի տեսակը եւ անհոլով ուղղական ձեւը։ Այս դէպքում՝ «ստուգավանդակ» բառը անհոլով ձեւն է, եւ բառի տեսակը գոյական։ Ուրեմն՝ **Նոր Բառ** դաշտում պէտք է ներմուծենք այս անհոլով ձեւը եւ ընտրել **Գոյական/Ածական** կլոր կոճակը, այնուհետեւ սեղմել **Աւելացնել** կոճակը։ Արդիւնքում՝ ուղղագրական բառարանում ընդգրկւում է «ստուգավանդակ» բառի բոլոր հոլովման տարբերակները։

Իբրեւ բայի օրինակ, ենթադրենք աւելացնում ենք «ստուգավանդակեցի» բառը (ուշադրութիւն՝ սա միայն օրինակի համար, զգուշացնենք որ պետք է խուսափել այսպիսի անհեթեթ բայեր կամ բառեր ստեղծել հայերեն լեզւում)։ Այս դեպքում, նախ գտնում ենք որ բառը բայի խոնարհում է, եւ անորոշ ձեւը այս բայի «ստուգավանդակել» է։ Ուրեմն՝ **Նոր Բառ** դաշտում պետք է ներմուծենք այս անորոշ ձեւը, եւ ընտրելով **Բայ** կլոր կոճակը, սեղմենք **Աւելացնել** կոճակը։ Արդիւնքում՝ բառարանում կ'ընդգրկուեն այս նոր բայի բոլոր եղանակները եւ խոնարհման ձեւերը։

Բառագանձի օգտագործման և խնդրափեղկի մասին

Նախորդ մասում, նկարագրեցինք Microsoft Word ծրագրի` ուղղագրութիւն ստուգելու երկու տարբեր եղանակներ։ Այնուհետեւ, մեր ուղղագրիչի նկատմամբ` նկարագրեցինք առաջին եղանակի մանրամասները։ Այս մասում, կ՚ներկայացնենք ուղղագրութիւն ստուգելու մի այլ միջոց, ընդ որում` ընգրկուած են բոլոր գործառոյթները երկրորդ եղանակի, սակայն` առանց վրիպող բառերի տակ կարմիր ընդգծումների։

Ուղղագրիչ 3.0 ծրագրում մշակուած է եւս մի հնարաւորութիւն, ընդ որուն՝ հայերէն գրութեան համատեքստում, երբ՝ ցանկացած բառի վրայ՝ աջ մկնիկով սեղմում ենք, ցուցադրւում է ընտրացուցակ պարունակելով հետեւեալը՝

• Եթե բառը ուղղագրութեամբ վրիպում է, ապա՝ առաջարկների ցանկը, եւ՝

Ignore (Անտեսել) Ignore All (Անտեսել Բոլորը) Add To Dictionary (Աւելցնել Բառարան)... Look Up (Բառարան)... Auto Correct (Ինքնաշտկել) • Իսկ եթէ բառի ուղղագրութիւնը ճիշտ է ապա՝ միայն

Look Up (Բառարան)...

Փաստօրէն` այս ձեւով, օգտագործողը հնարաւորութիւն է ունենում՝ ուղղագրել գրութիւնը առանց աշխատեցնելու Ուղղագրիչի վահանակը։ Նշենք նաեւ` որ երբ ներածման շարժագծի դիրքը վրիպող բառի վրայ է, պատուհանի աջ կողմում, խնդրափեղկի յատակում` **Ընտրուած Բառ** դաշտը ցուցադրւում է կարմիր գոյնով։

Բացի ուղղագրական գործառոյթներից՝ Ուղղագրիչ 3.0 ծրագիրը ընդգրկում է նաեւ՝ բացատրական բառարանների գործառոյթներ։ Որոնք իրականացւում են խնդրափեղկի շնորհիւ։ Օգտուելով աջ մկնիկի կոճակից, ցանկացած հայերէնով գրուած բառի վրայ սեղմելիս՝ ընտրացանկից ընտրել **Look Up (Բառարան)**։ Արդիւնքում, այդ բառը ինքնաշխատ ներմուծւում է խնդրափեղկի **Բառ** դաշտում եւ բացատրութիւնը որոնւում ծրագրի բառարանում։ Եթե համակարգչի վրայ տեղակայուած ծրագրի բառարանում բացատրութիւնը գտնւում է, ապա՝ **Բառակազմ** եւ բացատրութեան դաշտերում ցուցադրւում են այս բացատրութիւնները։ 2ուգահեռ այս գործողութեան, **Տես Նաեւ** մասում ցուցադրւում են սոյն բառի հետ կապուած Նայիրի կայքում թողարկուած բառարանների էջերի յղման կապերը։ Այսպիսով՝ հնարաւորութիւն է դրւում օգտագործողին չափազանց հեշտութեամբ աչքի առաջ ունենալ ցանկացած բառի բացատրութիւններ, հոմանիշներ եւ այլ բառարանային տեղեկութիւններ։

Փոխարկում դասական եւ նոր ուղղագրութիւնների միջեւ

Ուղղագրիչ 3.0 ծրագիրը օժտուած է դասական եւ նոր ուղղագրութիւնների միջեւ փոխգործուն փոխարկիչներով։ Յատուկ վահանակների շնորհիւ, փոխարկիչները, ճիշտ ուղղագրիչի նման՝ կիրառւում են փոխգործուն կերպով։ Վահանակները ընդմիջում են միայն երբ՝ անհրաժեշտ է դառնում օգտագործողի որոշումը ըստ հետեւեալի՝

- (1) Երբ, ըստ աղբիւրի ուղղագրութեան՝ ընթացիկ բառի ուղղագրութիւնը վրիպում է կամ չի ճանաչւում։
- (2) Երբ ընթացիկ բառի փոխարկման ընթացքում երկընտրանք է յառաջանում։

Նուազեցնելու համար առաջին տեսակի ընդմիջումների թիւը, առաջարկում ենք նախ քան փոխարկման անցնելը՝ ամբողջովին ստուգել փաստաթղթի ուղղագրութիւնը, եւ անշուշտ՝ այն ուղղագրութեամբ, որ՝ փոխարկման ընթացքում համարուելու է աղբիւրի ուղղագրութիւն։ Երկրորդ տեսակի ընդմիջումները աւելի հազուագիւտ են, եւ պատահում են միայն՝ նոր ուղղագրութիւնից դեպի դասականի փոխարկման դեպքում։

Դասականից դեպի Նոր Ուղղագրութեան

Աշխատեցնելու համար դասականից դէպի նոր ուղղագրութեան փոխարկման գործընթացը, պետբ է բացել ցանկացած Word փաստաթուղթ եւ ներածման շարժագծի դիրբը դնելով գրութեան սկիզբում՝ Convert Orthography (Փոխարկել Ուղղագրութիւնը) ընտրացանկից

WI 🚽 🤊 - 🕑 🖛	COLUMN TWO IS NOT	Docume	nt3 - Microsoft Word		1000	- • ×
File Home Ins	rt Page Layout References	Mailings Review View	Add-Ins			۵ (?)
ABC Spelling & Grammar Word Count Proofing	Armenian Spelling • HySpell Language	New Comment Comments	Track Changes - P Reviewing Pa Track	Markup * p * Accep ne * *	t Reject Changes	Compare Protect
L	<u> </u>	<u>1 · · · 1 · · · 2 · · · 1 · · ·</u>	3 1 4 1	5 1	· 6 · · · 👌 · · · 7 ·	· ·
	Ծաևոթուլ Սույն ուղեգիլ Լեզվի Ուղղաշ 2010 թ. հեղ Ուղղագրիչ 1 դասական ուղ շուրջ։ Սակայ թիվը (նույնիս անգամ ևս՝ ցո Ի ցավոք սրտի Մայրենու գոյ սա՝ ոչ թե ա տխրահռչակ ական, բառիս հիմար որոշու վի Նոր, փորձ Յայաստանի f	թյուն թքը պարունակում է անհր դրիչ ծրագրաշարի 2.0 տարբ ոնակի կողմից թողարկված 0-ը, անկասկած ազդեցիկ ղլագրության պահպանմավ ն՝ հեղինակի խորին համոգ կ երբ ծրագրաշարը անվճա այց տվեց հայերեն լեզվի կոո ո, ծրագրաշարիս թողարկմս այնարմի դժբախտությունն շխարհով ի սվյուռ հայ գ ՅՅ «գիտության և կրթությ բուն իմաստով՝ հականգեկ մն էր 2010 թվի նախաշեմի 6 էր արվում օտարալեզու ոանրապետության օրենսդր ոլությամբ՝ մանրամասնորն	աժեշտ մանրամասնուր երակի տեղակայման և դեր ունեցավ հասար ս և հայերեն լեզվի ուղղատ յս և հայերեն լեզվի գրա մամբ՝ Ուղղագրիչի անգ ուր մատուցվում հայկս ուների ահազանգային օ սն ավետիսից հազիվ երկ աղութներում, այլ՝ Երկ ան» նախարար Արմեն ուսիան «իշխանիկ»ների, ն, ընդ որուն՝ բոլշովիկե նախակրթական դպրո ության մեջ։		ւղղագրութեան սլներ : սղագրութեամբ : սլներ : ոււթեամբ : I: Խոսքս՝ լի և ԴԴԿ- ադրուժ և սանական խուժումը ոււմ, այժմ	
Page: 1 of 2 Words: 431	2։։։ըսերել մյուլ սիան» կամ « որոշեցինք ան րականը, ի բ մշանման, լառ	ւթյուններ նրայն այն որ տրոյական ծիու» տեսակի, յցնել «երկրորդ նախագիծ» ասորվութեան եւ զարգազմ	Դրդրա արտականք այսս Յայաստանը ներսից ո պաշտպանական յանձն սնշուշտ՝ հայերեն լեզո ան ձեռնաոննեո։ Յալեո	գրել, ազգադավ, «դ յչնչացնող՝ յարձակ յարարականին։ Յա ւի համակարգչայի էն լեզուհ ուռոազոո	ումներին, յնձնարա- ն ոլորտի ութեան եւ	

ընտրել To Reformed (Նոր ուղղագրութեան) իրահանգը։

Պատկեր 20 – Փոխարկել Նոր Ուղղագրութեան վահանակը գործընթացի մէջ

Արդիւնքում՝ ծրագիրը ինքնաշխատ փոխարկում է գրութեան հայերէն մասերի ուղղագրութիւնը դասականից դէպի նոր։ Իսկ երբ անորոշութիւն է յառաջանում, ցուցադրւում է **Փոխարկել Նոր Ուղղագրութեան** վահանակը, ընդ որում՝ այդ ընթացիկ անորոշ հարցը փոխանցւում է օգտագործողին (տես օրինակ Պատկեր 20-ին ներկայացուած վահանակի դէպքը)։ Իր հերթին, օգտագործողը կա՛մ ընդունում է առաջարկուած բառը, կա՛մ ներմուծում աւելի ընդունելի տարբերակը **Բառը Նոր Ուղղագրութեամբ** խմբագրման դաշտում, եւ սեղմում **Փոխարկել** կոճակը։ Այնուհետեւ՝ ծրագիրը նոյն եղանակով շարունակում է փոխարկման գործընթացը, մինչեւ փաստաթղթի վերջը։

Փոխարկման Նոր Ուղղագրութիւն վահանակը կազմուած է հետեւեալ մասերից՝

Ներածման տուեալներ Բառը Դասական Ուղղագրութեամբ Առաջարկներ

որտեղ ցուցադրւում է բառի դասական ձեւը, որտեղ ցուցադրւում է առաջարկների ցանկ,

Արտածման տուեալներ Բառը նոր Ուղղագրութեամբ

որտեղ ցուցադրւում է բառի նոր ձեւը։

Նշենք որ՝ **Առաջարկներ** ցուցակի գործառոյթը ճիշտ նոյնն է ինչպես՝ Ուղղագրիչի սոյն անունով ցուցակը։ Սա նշանակումը է որ փոխարկիչը ինքնաբերաբար՝ ստուգում է ընթացիկ բառի ուղղագրութիւնը՝ ըստ աղբիւրին, եւ վրիպումների դեպքում ցուցադրում առաջարկներ։

Նոր Ուղղագրութիւնից դեպի Դասական

File Home Insert Page Layout References Mailings Review View Add-Ins ABC	○
ABC Research UP ab Mr and Mr a	
Spelling & Armenian Spelling & Armenian Spelling & Armenian Spelling & Armenian Spelling & Spelling	Restrict Editing
 Proving Proving	

Պատկեր 21 – Փոխարկել Դասական Ուղղագրութեան վահանակը գործընթացի մէջ

Նոր ուղղագրութիւնից դեպի դասական փոխարկման գործընթացը, բացի՝ վահանակի մի փոքր տարբերութեամբ, բոլորովին նոյն ձեւով է գործում։ Ստորեւ ներկայացնենք վահանակի համապատասխան մասերը՝

Ներածման տուեալներ Բառը Նոր Ուղղագրութեամբ Առաջարկներ

որտեղ ցուցադրւում է բառի նոր ձեւը, որտեղ ցուցադրւում է առաջարկների ցանկ,

Արտածման տուեալներ

Դամանունների առաջարկներ որտեղ ցուցադրւում է համանուններ ցուցակ, **Բառը Դասական Ուղղագրութեամբ** որտեղ ցուցադրւում է բառի դասական ձեւը։

Նշենք որ` համանունների առաջարկների պահանջքը` նոր ուղղագրութիւնից դեպի դասական փոխարկման ընթացքում, ծագում է նոր ուղղագրութեան «Յ» եւ «Ի» տառերի իբրեւ` «Յ» եւ «Վ» զիջման պատճառաւ։

Ինչպե՞ս փոխարկել ARMSCII-8 TEXT նիշքը UNICODE-ի

Այս գործառոյթը թերեւս՝ անհրաժեշտ է այն դէպքում, երբ՝ հին TEXT նիշքեր ունենք որոնք՝ արձանագրուել են ARMSCII-8, ոչ UNICODE այլագրումով։ Օրինակ՝ անցեալ ՅայՍպել 1.0 տարբերակում, Custom.dic նշոցը այսպիսի այլագրումով էր պահւում։ Բացի այդ, հնուց կուտակուած բազմաթիւ նիշքեր կան ARMSCII-8 այլագրումով արձանագրուած, եւ շատ հաւանական է պահանջքը՝ այս նիշքերը փոխարկուելու UNICODE այլագրումի։

Oգտագործելու համար այս փոխարկիչը, HySpell-ի գլխաւոր կոճակի **Convert ARMSCII-8 to UNICODE (Փոխարկել Նիշբը)** ընտրացանկից սեղմել **Any TEXT file (Այլ տառաթուային նիշբ)** տողի վրայ։ Ծրագիրը կ'ցուցադրի **Փոխարկել ARMSCII-8 նիշբը UNICODE-ի** վահանակը (տես Պատկեր 17)։ Այս վահանակում, եռակետ կոճակների միջոցաւ ներածել՝ ARMSCII-8 ներածման եւ UNICODE արտածման նիշբերի ուղու անունները, այնուհետեւ՝ սեղմել **Փոխարկել** կոճակը։

Ուղղագրիչի Firefox-ի տարբերակ

Ուղղագրիչ 2.4 ծրագրի փաթեթում պարունակուած է նաեւ Mozilla ծրագրերին վերաբերող տարբերակ։ Այս տարբերակը միաւորւում է ընդհանրապես բոլոր Mozilla ծրագրերի հետ, այդ թւում նաեւ՝ Firefox ցանցային զննարկիչ, ThunderBird ե-նամակ սպասարկող եւ SeaMonkey ծրագրերի հետ։ Այս մասում, կ'ներկայացնենք Firefox ծրագրի դեպքում՝ ուղղագրիչի տեղակայման եւ օգտագործման մանրամասները։

Ենթադրւում է որ արդէն՝ ուղղորդուել էք Mozilla Suite and OpenOffice Download ներբեռնման կայքէջ (տես Պատկեր 22) օգտագործելով Firefox ցանցային զննարկիչ ծրագիրը (ուշադրութիւն՝ այս գործողութիւնների համար պարտադիր է օգտագործել Firefox)։

Այդ Էջում տեսանելի են հետեւեալ երկու XPI տեղադրիչ նիշբերը՝

- HySpellArmenianSpellingMozillaSuite_2.4.0.xpi
- HySpellArmenianSpellingMozillaSuiteRO_2.4.0.xpi

Ինչպես կայքեջում նիշքերի աջ կողմում նշուել են, առաջինը՝ տեղադրիչն է դասական ուղղագրութեան տարբերակի, իսկ երկրորդը՝ նոր ուղղագրութեան։

Favorites 📕 HySpell: Spelling Support for Mozilla Suite DownI	🖄 - 🖑 🖻 - 🖶 -
HySpell.com	Home Armenian
Home Products Customer Downloads Support Activities Articles Videos About	
Mozilla Suite and Op <mark>er Office Down</mark> load up on the 1pp	
Your Mozilla Suite and OpenOffice download files are shown below. To install HySpell Armenian Spelling Support for FireFox, make sure you are using the FireFox browser to via When FireFox asks to allow the installer to proceed, click the Allow button on the top-right side of the page,	ew this page, and click on the desired XPI downloadable file link below. and then in the installer dialog click the Install Now button.
Download Files	r, and when you are ready, simply click and open the desired OAT me link below.
HySpellArmenianSpellingMozillaSuite_2.4.0.xpi (Firefox - Classical Orthography	Դասական Ուղղագրութիւն) Size: 905KB
HySpellArmenianSpellingMozillaSuiteRO_2.4.0.xpi (Firefox - Reformed Orthograp	ohy Նոր Ուղղագրութիւն) Size: 896KB
HySpellArmenianSpellingOpenOffice_2.4.0.oxt (OpenOffice - Classical Orthograp	ıhy Դասական Ուղղագրութիւն) Size: 904KB

Պատկեր 22 – Ուղղագրիչի Firefox եւ OpenOffice տարբերակների ներբեռնելու կայբէջը

Տեղադրելու համար ուղղագրիչը, սեղմեք այս ցանկից՝ ձեր նախասիրած ուղղագրութեան տարբերակի յղման կապը։ Firefox ծրագիրը կ'ցուցադրի հետեւեալ վահանակը՝



Պատկեր 23 – Firefox ծրագրի տեղադրման արտօնութեան վահանակը

Այնուհետեւ՝ սեղմեք Allow կոճակը։ Firefox ծրագիրը կ'ցուցադրի տեղադրման վահանակը Install եւ Cancel կոճակների ընտրանքով (տես Պատկեր 24-ի վահանակը)։ Շարունակելու համար ուղղագրիչի տեղադրում՝ սեղմեք Install կոճակի վրայ։ Firefox ծրագիրը կ'տեղադրի ուղղագրիչը եւ կ'առաջարկի վերսկսեցնել Firefox-ը։ Սեղմեք Restart Now կոճակը որպեսզի աւարտի տեղադրման գործընթացը։

ԾՐԱԳՐԻ ՈԻՂԵԳԻՐՔ

Software Ir	stallation
	Install add-ons only from authors whom you trust. Malicious software can damage your computer or violate your privacy.
You ha	ve asked to install the following item:
*	HySpell Armenian Spelling Support (RO) (Author not verified) http://www.hyspell.com/ProcessFile.aspx?file_id=4&mode=view
	Install (4) Cancel

Պատկեր 24 – Firefox ծրագրի տեղադրման վահանակը

Օգտագործելու համար Firefox-ի Ուղղագրիչ 2.4 ծրագիրը, համացանցի վրայ ուղղուէք ցանկացած ցանցային ծրագիր, օրինակ՝ FaceBook, եւ ներածէք մեկնաբանութիւն ցանկացած խմբագրման դաշտի մէջ (օրինակ՝ տես Պատկեր 25)։

🗾 Կարգավիճակ 🔳 Լո	ուսանկար	>			
💮 Միջադեպեր կյանքից	💮 Միջադեպեր կյանքից				
ժողովրդական հասարակա համացանցերի արուեստա «համաշխարհայնացման» հրականում` համահպտգե	սկան ընդհանուր ընթա ւգիտական նորութիւնն > քխղի ներքոյ` տարածւ	ւցքների հետ, երի շնորհիւ՝ ում Էր ~արտ			
ծրագիր։ Իր հերթին ե	<u>U</u> ndo	ին, իայ			
ազգը՝ քսան տարուա ազգային աետանանո	Cu <u>t</u>	ւրտել լագում»ո			
ըստ իր դաւադիր նպս	<u>C</u> opy	I			
ուծացումը, այսինքն`	<u>P</u> aste				
1.0 9	<u>D</u> elete	ւպարակել			
	Select <u>A</u> ll				
*	DownloadHelper				
11 ປະເມີ 🛞	Check Spelling				
	Inspect Element (Q)				
Ի՞նչին հաւատանք…		-			

Պատկեր 25 – FaceBook-ի խմբագրման դաշտում աջ մկնիկի ընտրացանկը

Օգտագործելով աջ մկնիկը սեղմեք որեւէ տեղ խմբագրման դաշտի մեջ։ Ծրագիրը կ'ցուցադրէ ընտրացանկը (տես Պատկեր 25), այս ցանկում՝ սեղմեք **Check Spelling**։ Կրկնեք այս աջ մկնիկի իրահանգը մէկ անգամ եւս, եւ ընտրացանկում ստուգէք **Languages** ընտրանքում. լեզուն պէտք է դարձնէք հայերէն։ Այնուհետեւ՝ խմբագրման դաշտում երեւան կ'գան բոլոր ուղղագրական սխալները կարմիր ընդգծումներով։ Այսպիսի ընդգծուած բառի վրայ աջ մկնիկը սեղմելիս՝ կ'ցուցադրուի ընտրացանկ, ընդ որում կ'գտնէք ուղղումների առաջարկները, օրինակ տես Պատկեր 26։ Վրիպած բառը ուղղելու համար ընտրէք ամէնաճիշտ առաջարկը։

dınınılınınılı hunun hu	🗐 Միջադեպեր կյանքից			
Իր հերթին եւ ի հեճուկս յս հառմահարթեցման ' քսան տարուայ ընթացքում չկս հառմահարթեցնեն իր պետականութիւն։ Իսկ «Ի հառմահարթեցնեն իր Հե< O	Ժողովրդական հասարակական ընդհանուր ընթացքների հետ, համացանցերի արուեստագիտական նորութիւնների շնորհիւ՝ «համաշխարհայնացման» քօղի ներքոյ` տարածւում Էր հրանանում` իամահոթեզման ստոնանան մի արարտ ծրագիո։			
umpnicuj pujauggnicu žųų ukonuų unuphici: ruų «transminium phici: ruų unup quujuugi) hurium hum pais ghiti hp 1	Իր հերթին եւ ի հեճուկս յս	համահարթեցման	լ՝ քսան	
hui unhip hui unuu hhi `uu ujuhu bu` uuuu qquu juugr ↓ ● ♥ ● ♥ HySpell Spellchecke 11 duul unuug ♥ Paste Delete Select <u>A</u> II DownloadHelper ▶ Check <u>Spelling</u> Languages ▶ n ^{nti}	տարուայ ընթացքում չկս պետականութիւն։ Իսկ «Ի	համահարթեցնեն	hp	
impluguti umquqqujumqr hmufunhuppetghti impluguti umquqqujumqr Add to Dictionary impluguti mqr Q impluguti mqr Add to Dictionary impluguti mqr Q impluguti mqr Q <td< td=""><td>դաւադիր նպատակին՝ ա</td><td>համահարթեցնելն</td><td>· · ·</td></td<>	դաւադիր նպատակին՝ ա	համահարթեցնելն	· · ·	
Add to Dictionary Image: Add to Dictionary </td <td>այսինքն՝ ապազգայնացո</td> <td>համահարթեցնել</td> <td></td>	այսինքն՝ ապազգայնացո	համահարթեցնել		
HySpell Spellchecke Undo 11 dwd wnwg ⊘ Cut Paste Delete Delete Select <u>A</u> ll DownloadHelper Check <u>Spelling</u> Languages nntbl	1.09.03	Add to Dictionary	րակել	
HySpell Spellchecke Cut Copy 11 duul unnug Paste Pelete b°lughlu huutuunulup Select All DownloadHelper ✓ Check Spelling Innti Languages Innti Innti		<u>U</u> ndo		
11 duư unug ⊘ Copy Paste Delete Delete Select <u>All</u> DownloadHelper Check <u>Spelling</u> Languages nnti	HvSpell Spellchecke	Cu <u>t</u>		
Paste Delete Select <u>A</u> ll DownloadHelper Check <u>S</u> pelling Languages Annti Languages Annti Languages Annt	11 duul unug 🕐	<u>С</u> ору		
h°lughu huuumulug Delete Select All DownloadHelper ✓ Check Spelling Languages nntl		<u>P</u> aste		
Select <u>A</u> ll DownloadHelper • Check <u>Spelling</u> Languages • <u>nntil</u>	Ի՞նչին հաւատանք	<u>D</u> elete		
Image: Second secon		Select <u>A</u> ll		
Check Spelling		💡 DownloadHelper 🔹 🕨		
Languages ի դրել չերում		Check Spelling		
Edited	A second	Languages	դրել stopul	
Inspect Element (O)		Inspect Element (Q)	e of in to	

Պատկեր 26 – Վրիպումի վրայ աջ մկնիկի ընտրացանկի օրինակ

Ուղղագրիչի OpenOffice-ի տարբերակ

Այս մասում կ'ներկայացնենք OpenOffice ծրագրի հետ միաւորուող` ուղղագրիչի տեղադրման եւ օգտագործման մանրամասները։

Տեղադրելու համար, ենթադրւում է որ արդէն ուղղորդուել էք ներբեռնման կայքէջ, օրինակ տես Պատկեր 22, որտեղ տեսանելի է հետեւեալ երկու OXT տեղադրիչ նիշքերը՝

- HySpellArmenianSpellingOpenOffice_2.4.0.oxt
- HySpellArmenianSpellingOpenOfficeRO_2.4.0.oxt

Ինչպես կայքեջում նիշքերի աջ կողմում նշուել են, առաջինը՝ տեղադրիչն է դասական ուղղագրութեան տարբերակի, իսկ երկրորդը՝ նոր ուղղագրութեան։ Որպեսզի տեղադրեք հայերենի ուղղագրիչը OpenOffice ծրագրում, սեղմեք ձեր նախընտրած ուղղագրութեան նիշքի յղման կապի վրայ։ Արդիւնքում՝ կ'ցուցադրուի Պատկեր 27-ի վահանակը։ Այս վահանակում, ընտրեք **Open with** OpenOffice կլոր կոճակը եւ սեղմեք **OK**։

Opening HySpellArmenianSpellingOpenOffice_2.4.0.oxt				
You have chosen to open:				
Realize HySpellArmenianSpellingOpenOffice_2.4.0.oxt				
which is a: OpenOffice.org Extension (883 KB) from: http://www.hyspell.com				
What should Firefox do with this file?				
Open with OpenOffice.org 3.4.1 (default)				
Save File				
Do this <u>a</u> utomatically for files like this from now on.				
OK Cancel				

Պատկեր 27 – Ուղղագրիչի տեղադրման սկզբնական վահանակը

Կ'ցուցադրուի Պատկեր 28-ի վահանակը, որտեղ պետբ է սեղմեբ **OK** կոճակը։

OpenOffice.org 3.4.1						
	You are about to install the extension 'Armenian spelling (Classical)'. Click 'OK' to proceed with the installation. Click 'Cancel' to stop the installation.					
	OK Cancel					

Պատկեր 28 – Ուղղագրիչի տեղադրման արտօնութեան վահանակը

Այնուհետեւ, կ'սկսուի տեղադրման գործընթացը եւ յաջողութեան դէպքում՝ կ'ցուցադրուի **Extension Manager** վահանակը, ընդ որում՝ տեսանելի պետք է լինէ հայերէնի ուղղագրութեան բաղադրիչը։ Օրինակ՝ տես Պատկեր 29-ը, որտեղ պատկերուած է Armenian spelling (Classical) բաղադրիչը, իբրեւ տեղադրման գործընթացի արդիւնք։

Լրացնելու համար տեղադրման գործընթացը՝ Extension Manager վահանակում սեղմեք Close կոճակը, եւ ապա՝ փակեք համակարգչում բոլոր OpenOffice գործուն ծրագրերը։ Անհրաժեշտ է նաեւ փակել OpenOffice QuickStart մայր ծրագիրը, որու կանչագիրը ընդհանրապես տեսանելի է առաջադրանքների շերտում կամ Windows սեղանի խնդրաշերտում։

S Extension Manager					
رچ	Armenian spelling (Classical) 2012.11.14				
	<u>D</u> isable <u>R</u> emove				
4	English spelling and hyphenation dictionaries and thesaurus 2010.03.16				
<u>H</u> elp	p <u>A</u> dd Check for <u>U</u> pdates <u>Close</u>				

Պատկեր 29 – Ուղղագրիչի տեղադրման աւարտի Extension Manager վահանակը

Օգտագործման համար վերսկսեցնել ցանկացած OpenOffice ծրագիր, օրինակ Text Document:

<u>F</u> ile <u>E</u> dit <u>V</u> iew Insert F <u>o</u> rmat T <u>a</u> ble <u>T</u> ools <u>W</u> indow <u>H</u> elp				
: 💼 • 😕 🔜 🖂 🔛 🖴 🕒 🕓 🏷 🕾 😹 🛍 • 🛷 ୭ • @ • 💩 🎟 •				
Image: Provide the second	Ε			
L · · · 2 · · · · 1 · · · · 1 · · · · 2 · · · ·	•••			
– Շատ լաւ, մի վայրկեան, պայուսակս վերցնեմ ու գնանբ։				
Փրոֆեսորի ուշադրութիւնը սեւեռեց գրասեղանի վրայ դրուած Մի	ւրի			
– Ապարը գրեւը սոր բր, սա չբր պարողասուս եշտել սպարառասուսը ու	im			
– Այդ որ վերջին անգամ <mark>Յայստանում</mark> էինք, Թեղուտ անտառների մ	Łջ`			
շ լինելով, մեզ առաջարկե Հաստանում րուն նկար հան	1: I			
Ափսոս Թեղուտի անտա շ _{արստանում} երեզման դարձլ	ւին			
գոյութիւն չունի այսօր: Հայստանում				
	՝ ն			
բառի իմաստը:	_			
👝 Մհերը ուշադիր մտիկ էր ^{Հարուստանում} ին, նա արդեն ս	լալ			
առջել։ Նրա յարգանբը վ Հայաստանեանում կանց բարձր էր	իլ			
- Ignore				
Ignore All				
AutoCorrect				
. Spelling and Grammar				
- Set Language for Selection >				
Set Language for Paragraph >	-			

Պատկեր 30 – Ուղղագրիչի աջ մկնիկի ընտրացանկի օգտագործման օրինակ

OpenOffice-ի այս ծրագրում, հայերէն գրութեան համար նախ՝ աջ մկնիկի միջոցաւ ցուցադրէք ընտրացուցակը, եւ ստուգէք **Set Language for Selection** կամ **Set Language for Paragraph** ընտրանքի շնորհիւ որ՝ հայերէն լեզուն է ընտրուած։ Արդիւնքում, ծրագիրը ուղղագրական վրիպումները կ'ցուցադրի կարմիր ընդգծումներով։ Ուղղելու համար ցանկացած վրիպուած բառ՝ աջ մկնիկի կոճակը սեղմել վրիպող բառի վրայ։ Ծրագիրը կ'սփռէ ընտրացուցակը, որտեղ ի միջի այլոց՝ կ'ցուցադրուի առաջարկների ցանկը։ Այնուհետեւ, այս առաջարկներից պէտք է ընտրել յարմար ուղղումը։

Մի բանի խօսբ ուղղագրութեան հարցերի մասին

Այս մասում, կ՝անդրադառնանք Ուղղագրիչ 3.0 ծրագրում ընդգրկուած ուղղագրութիւնների միջեւ փոխարկիչ ծրագրի վիճակագրական տուեալների մասին։ Այնուհետեւ՝ կ՝անցնենք հայերէն լեզուի ուղղագրութեան վերաբերող մի քանի հարցերի եւ եզրակացութիւնների։

Նախ յայտնենք որ ուղղագրութիւնների միջեւ փոխարկիչը կառուցուած է հայերեն լեզուի բառարանային կամ շտեմարանային հիմքերի վրայ։ Ըստ այնմ՝ փոխարկութիւնը կատարւում է բառաշտեմարանի եւ համապատասխան խոնարհման օրենքների աղիւսակների շնորհիւ։ Որպեսզի օգտակար լինենք լեզուաբաններին՝ այս աղիւսակների նիշքերը թափանցիկ ենք թողել ծրագրաշարում (օրինակ՝ տես ծրագրի գլխաւոր ծրարի՝ Dictc եւ Dictr ենթածրարներում պարունակուած CRLexMap.dic, CRFlexMap.dic, RCLexMap.dic, RCFlexMap.dic եւ այլ նիշքերը)։

Նախ զգուշացնենք որ մեր այս տողերի բուն նպատակը գիտական վերլուծութիւններ տալն է, եւ յորդորում ենք ընթերցողներից չքաղաքականացնել արդէն` բազմիցս քաղաքականացուած հայերէն լեզուի ուղղագրութեան հարցը։ Այս ուղղութեամբ մեր սկզբունքները հետեւեալն են`

- (1) Մեր երկու ուղղագրութիւններն էլ Մեսրոպեան են, այսինքն՝ չի կարելի մեսրոպեան տառերով գրութիւնը կոչել ոչ մեսրոպեան։ Դժբախտաբար, այսօրուայ դրութեամբ, կան անձինք՝ որոնք դեռեւս գրում են ոչ մեսրոպեան տառերով, այսինքն՝ լատինատառ հայերէնով։ Ահա՛ դա է ոչ մեսրոպեանը։
- (2) Անհիմն է այն կարծիքը իբր՝ նոր ուղղագրութիւնը աւելի հնչիւնային է քան դասականը։ Սա իրականում, ըստ լեզուաբանութեան՝ տուեալների խեղաթիւրում է։ Տառերը աւելի հնչիւնային են ըստ բարբառի, եւ ուրեմն՝ նախ եւ առաջ պէտք է գտնել եւ ապացուցել թէ ի՞նչ է, կամ ի՞նչ պէտք է լինէ մեր այսօրուայ օտարասիրահարներով հեղեղուած հասարակութեան գործածական բարբառը, եւ ըստ այնմ՝ որոշել թէ որ բառը ինչ հնչիւնով է լսւում։ Վստահ եմ՝ կ′զարմանաք արդիւնքից։ Այս առումով չենք էլ յիշեցնում որ՝ բաղաձայնները բառերի ընդմիջում կամ վերջում տարբեր են հնչւում քան թէ սկզբում։ Սա անշուշտ ոչ մի հեշտութիւն չի ներշնչում այն ենթադրութեան, ըստ որու՝ ուղղագրութիւնը պէտք է հնչիւնից որոշուէ։
- (3) Ուղղագրութեան կանոնները պետք են առաւելագոյնս պահպանեն բառերի արմատները ըստ բառակազմութեան օրենքներին։ Երբ արմատը բառակազմութեան ընթացքին կորցնում է իր իմաստային տեսքը, զուգահեռաբար՝ եւ այդ ձեւափոխութեանը համա-

պատասխան՝ օտարւում է կազմուած բառի իմաստը։ Նշենք որ՝ մեր կարծիքով աւելի բնական է գիտենալ նախ՝ բառի իմաստը եւ ըստ այնմ՝ յիշել կամ որոշել բառի ուղղագրութիւնը (այսինքն՝ մենք սովորական թութակներ չենք)։

(4) Ըստ լեզուաբանութեան, լեզուի բնական ընթացքում գոյացած նոյնիսկ բառերի սխալ օգտագործման կամ վրիպումների նկատմամբ պետք է դրսեւորել խիստ պահպանողական կեցուածք։ Մենք՝ հակառակ ենք լեզուի անբնական յեղափոխական կամ հրամանագրային (իմա դեկրետային) ալիքների միջոցաւ փոփոխութեան։ Այսօր մենք ունենք երկու կատարեալ եւ գործուն ուղղագրութեան կանոնադրութիւններ, եւ ծաւալուն գրականութիւն հրատարակուած այս երկու ուղղագրութեան կանոններով։ Բնական զարգացման ընթացքը պահանջում է կառուցողական մօտեցում, որից բխում է երկուսի պահպանումը ի դեմս իրենց բնական գոյատեւման գործընթացին։

Վիճակագրական մեր վերլուծումները հիմնուած են աւելի քան 156 հազար անհոլով կամ կիսահոլով բառերի շտեմարանի եւ առնուազն 300 քերականական օրենքների վրայ (օրինակ՝ տես CRLexMap.dic եւ CRFlexMap.dic նիշքերը)։

Ուղղագրութիւնների միջեւ դժուարութեան կամ հեշտութեան գլխաւոր տարբերութիւնը, ոչ թէ մեբենայական հաշուեկարգային փոփոխութիւններից յառաջացած տարբերութիւններն են, այլ իմաստաբանական կամ բառարմատների ձեւին առնչուող տարբերութիւնները։ Եւ այս վերջինը կայանում է ընդհանուր հայերէն բառերի միայն 9–14 տոկոսում։

Փորձենք նախ՝ պարզաբանել այս դրոյթը։ Ըստ ուղղագրութեան կանոնների՝ փոփոխութիւնը մեքենայական ենք կոչում, եթէ՝ բառի փոխարկումը որոշւում է մեքենայաբար՝ որոշ տառեր փոխարինելով համապատասխան տառերով, եւ՝ հակառակ ուղղութիւնը նոյնպես որոշւում է մեքենայաբար։ Օրինակ՝ դասականի «թիւն» մասնիկը նոր ուղղագրութեան դեպքում մեքենայաբար փոխարինւում է «թյուն» մասնիկով, փոխարինման հակադարձը նոյնպես կատարւում է մեքենայաբար։ Նոյն ձեւով, հետեւեալ փոփոխութիւնները մեքենայական են՝

(1)	nj χ	\leftrightarrow	nıj χ	որտեղ χ -ը բաղաձայն տառ է,
-----	------	-------------------	-------	---------------------------------

(2)	<u></u> μ∟ <i>χ</i>	\leftrightarrow	JNL X	որտեղ χ	-ը բաղաձայն տառ է,
-----	---------------------	-------------------	-------	--------------	--------------------

(3)	ուե	\leftrightarrow	վե,
-----	-----	-------------------	-----

- (4) nւէ ↔ վե,
- (5) n∟w ↔ վw,
- (6) nLn ↔ վn,
- (7) nLh \leftrightarrow dh,
- (8) եօթ ↔ յոթ,
- (9) tພ ↔ jɯ,
- (10) Lnp ↔ վnp,
- (11) Lng ↔ վn₽,
- (12) աւոր ↔ ավոր,
- (13) եւոր ↔ եվոր։

Մեբենայական փոփոխութեան գլխաւոր յատկութիւնն է ուղղագրականոնի դժուարութեան

աստիճանի հաւասարութիւնը։ Այսինքն՝ օրինակ «թիւն» եւ «թյուն» կանոնների վարժութեան աստիճանը բոլորովին նոյն դժուարութիւնը ունեն։ Նոյնպես կարելի է ասել վերի նշուած (1) - (13) զոյգ կանոնների մասին։ Մի խօսբով` դասական ուղղագրութեան կողմնակիցի տեսանկիւնից, նոր ուղղագրութեան (1) - (13) կանոնները ոչ մի առաւելութիւն չեն տալիս։

Այս առումով վիճակագրական տուեալները հետեւեալն են։ 157,485 արմատական եւ կիսահոլով բառերի բազմութեան համար, միայն 69,116 բառ դասականի եւ նոր ուղղագրութեան միջեւ տարբերում են (այսինքն` բազմութեան 56%-ը համընկնում են)։ Այս տարբերութիւններից եթե հանենք մեքենայական փոփոխութեամբ փոխարկուողների թիւը, արդիւնքում կ'ստանանք մօտաւորապես` 20,730 բառեր, ընդհանուրի մօտաւորապես 13%-ը։ Օրինակ` այս արդիւնքը կարելի է ստանալ հետեւեալ SQL գործառոյթի եւ դրան յաջորդող որոնման հարցի շնորհիւ։

```
CREATE FUNCTION dbo.OldToNewByRules (@Word nvarchar(max))
RETURNS nvarchar(max)
AS
BEGIN
       DECLARE @WordOut nvarchar(max)
       SET @WordOut = (CASE WHEN @Word LIKE N'%nj[^uthontn]%' THEN
                                  REPLACE(@Word, N'nı',N'nıı')
                            ELSE @Word END)
       SET @WordOut = (CASE WHEN @WordOut LIKE N'%ht[^uthontn]%' THEN
                                   REPLACE(@WordOut, N'h1',N'jn1')
                            ELSE @WordOut END)
       SET @WordOut = REPLACE(@WordOut, N'nıt', N'ıt')
       SET @WordOut = REPLACE(@WordOut, N'nit', N'ut')
       SET @WordOut = REPLACE(@WordOut, N'nim', N'u')
       SET @WordOut = REPLACE(@WordOut, N'nin', N'dn')
       SET @WordOut = REPLACE(@WordOut, N'nih', N'uh')
       SET @WordOut = REPLACE(@WordOut, N'top', N'np')
       SET @WordOut = REPLACE(@WordOut, N'tu', N'ju')
       SET @WordOut = REPLACE(@WordOut, N'inp', N'inp')
       SET @WordOut = REPLACE(@WordOut, N'ing', N'ing')
       SET @WordOut = REPLACE(@WordOut, N'uunn', N'uunn')
       SET @WordOut = REPLACE(@WordOut, N'tunp', N'tunp')
       SET @WordOut = (CASE WHEN @WordOut LIKE N'%h1' THEN
                                  REPLACE(@WordOut, N'h1', N'h1')
                            ELSE @WordOut END)
       SET @WordOut = (CASE WHEN @WordOut LIKE N'%ul' THEN
                                   REPLACE(@WordOut, N'uu', N'uu')
                            ELSE @WordOut END)
       SET @WordOut = (CASE WHEN @WordOut LIKE N'%LL' THEN
                                   REPLACE(@WordOut, N'tu', N'tu')
                            ELSE @WordOut END)
       SET @WordOut = REPLACE(@WordOut, N'nınıpınıu', N'unipınıu')
       SET @WordOut = REPLACE(@WordOut, N'inipiniu', N'inipiniu')
       SET @WordOut = (CASE
             WHEN @WordOut LIKE N'%optu' AND @WordOut NOT IN (N'optu', N'uuoptu') THEN
                     REPLACE(@WordOut, N'optu', N'nptu')
              ELSE @WordOut END)
```

```
RETURN (@WordOut);
END;
GO
SELECT
WordID,
WordText,
WordTextN,
dbo.OldToNewByRules (WordText) Diff,
RootType,
RootTypeDesc
FROM HM_DictionaryRoot
WHERE
dbo.OldToNewByRules (WordText) <> WordTextN
```

Այս 20,730 բառերից մօտաւորապես կեսը կարելի է դեռ մի կերպ՝ մեքենայական համարել եթէ՝ փոխարկման գործողութեան աւելացնենք պայմաններ։ Արդիւնքում մնում են մօտաւորապես 10,000 բառեր, որոնց համար դասականում ուղղագրութիւնը որոշելու համար պետք է հիմնուել բառերի արմատական իմաստների կամ բուն դասական ուղղագրութեան կանոնների վրայ, ընդ որում՝ շատ փոքր մասը միայն արմատական վերլուծման ենթակայ։ Ի միջի այլոց՝ նոր ուղղագրութեան դեպքում էլ կան անորոշութիւններ եւ արմատական վերլուծման կարիքը ունեցող բառեր, յատկապես՝ «օ» տառով որոշ թուով բառեր, օրինակ՝ բաղդատել «տնօրեն» եւ «անօրեն», բայց՝ «ազատորեն», նաեւ «ոյ» վերջաւորութեամբ բառեր օրինակ «երեկո», «գազանաբարո», բայց՝ «գոյ»։

Իբրեւ պատկերացում այս 20,730 բառերի ուղղագրութեան տարբերութեան տեսակի, նշենք որ՝ 5,820-ը կապ ունեն «Է» տառի խնդրի հետ, 4,438-ը «Յ» տառի, 4,088-ը «Օ» տառի, եւ 7,774-ը «Ի» տառի խնդրի հետ («հիւն» իբրեւ բաղաձայն «վիւն»)։

Իբրեւ եզրակացութիւն, իմ կարծիբով՝ եթէ Մանուկ Աբեղեանը իր ժամանակ համակարգչային ծրագրաւորման միջոցներ ունենար, այսօր արդի (կամ բարեփոխուած) ուղղագրութեան պատկերը միայն 4,000 – 5,000 բառերով կ'տարբերէր դասականից, որոնցից մեծ մասը կ'լինէին գրաբարից մնացած «Յ» տառի խնդիրներ։

Յուցակ

Α

Alt-Gr Key, 9 Armenian Eastern, 8 Armenian Phonetic, 8 Armenian Typewriter, 8 Armenian Western, 8 ARMSCII-8, 18

С

Check Armenian Spelling (Ուղղագրել), 15 Convert Orthography, 18 Custom.dic, 18

Ε

Extension Manager վահանակը, 29

F

FaceBook, 27 Firefox, 1, 25, 26, 27

н

HySpell Setup and Diagnostics, 2 HySpell20Installer.exe, 2

I

InDesign, 1

L

Look Up (Բառարան), 22

Μ

Microsoft Office 2007/2010 Word, 3 Microsoft Office Customization Installer, 4 Mozilla, 25

0

OpenOffice, 1, 25, 26, 28, 29, 30, 31 OXT տեղադրիչ նիշբ, 28 Region and Language, 13

. . .

SeaMonkey, 25

Т

R

S

Thesaurus (Բառագաևձ), 16 ThunderBird, 25

U

Update dictionary references, 7

V

View Keyboard Layout կոճակ, 9

W

Word ծրագրի վերի Review մաս, 15

Х

XPI տեղադրիչ նիշք, 25

U

ԱԲԳ կոճակը, 15 Աղայան, 1 Աճառեան, 1 Այլ տեսակ կոճակը, 21 Առաջարկներ ցուցակ, 20 Արտածման տուեալներ, 24, 25 Աւելցնել Բառարան կոճակ, 19

4

Բայ, 21 Բառագանձ, 17 Բառագանձի օգտագործման, 21 Բառակազմ, 17 Բացատրութիւն ցուցադրիչ, 17

ዒ

Գոյական/Ածական, 21 Գույումճեան, 1 գրամեքենայ, 8 Գրամեքենայ (ընդլայնուած), 9

ጉ

Դասական ուղղագրութեան, 18 Դասականից դեպի Նոր, 22 դպրոցական, 2

ር

ընդլայնուած ստեղնաշարի տեղադրումը, 6 **Ընտրանբ**, 16, 17 ընտրացուցակ, 21 **Ընտրուած Բառ** ցուցադրիչ, 17

Γυ

Խաչատուրեան, 1 խնդրափեղկ, 17

σ

Ծանօթութիւն, 1 Ծրագրաշարի Տեղադրիչ, 3

ረ

Յնչիւնային (ընդլայնուած), 9

U

Մալխասեանց, 1

Ն

Նայիրի, 1 Ներածման տուեալներ, 23, 24 Նոր ուղղագրութեան, 18 Նոր Ուղղագրութիւն, 17 Նոր Ուղղագրութիւնից դեպի Դասական, 24

U

Ուղեգիրբ, 7 **Ուղղագրել**, 16 Ուղղագրիչ 2.4-ի գլխաւոր գործառոյթների ցուցակ, 15 Ուղղագրիչի ստուգման վահանակ, 19

U

սկզբնական նախընտրանբ, 17 Սուբիասեան, 1 ստեղնա-շարերի միջեւ շրջել, 13 Ստեղնաշարերի տեղադրում, 12

S

տառատեսակներ, 14 Տեղադրիչ, 6 տեղադրում, 2 **Տես Նաեւ** յղման կապ, 17 տողադարձի նշան, 12

Φ

Փոխարկել Ուղղագրութիւն, 16, 18 փոխարկիչ, 1 **Փոխարկման Նոր Ուղղագրութիւն** վահանակ, 23 փոխգործուն փոխարկիչ, 22